Azg Ազգ

7 ՅՈՒԼԻՍ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 124(4743)

ISSN: 1829-1651

Թալանված ձեռագրեր Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքից

Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ հունիսի 12-ին երկու հայ անձնավորություններ Լոնդոնում պատարագի ավարտին մոտեցել են Ներսես ավագ քհն. Ներսեսյանին՝ նրա կարծիքը իմանալու համար 5 հայկական մանրանկարների եւ երկու յուղանկարների վերաբերյալ: Նրանց հետաքրքրում էր այդ պատկերների նյութական արժեքը վաճառքի դնելու պարագայում: Տեր Ներսեսը ճանաչում է պատկերների պատկանելությունը, որպես մասունքներ Նոր Ջուղայի Սբ Ամենափրկիչ վանքի եւ բացատրում է երկու անձերին դրանց գողացված լինելը: Նկարների պատկերները տրված են վանքի տպագրված ձեռագրերի ցուցակում, եւ նկարների տակը տեղադրված արձանագրությունները պարսկերեն գրությամբ տալիս են պատկերների նկարագրությունը:

Տ. Ներսեսը նկարների մասին անմիջապես տեղեկացնում է Անթիլիաս, Արամ կաթողիկոսին, Թեհրանի թեմի առաջնորդ Սեղրուի արք. Սարգսյանին, եւ Նոր Ջուղայի թեմական խորհրդին:

Ըստ Անթիլիասի վեհարանի քարտուղար **Խաչիկ Դեդեյանի**՝ Արամ Վեհափառը, տեղեկանալով կատարվածի մասին, հրահանգել է Նոր Ջուղայի ազգային իշխանություններին անհապաղ եւ ամենայն լրջությամբ հետեւել խնդրին:

Թե իրականում ի՞նչ է կատարվել ձեռագրերի հետ, կարող են պարզել միայն վերոհիշյալ պատասխանատուները, որոնք ցարդ լռում են, այնինչ ոչ միայն իրանահայ համայնքը, այլեւ ողջ հայ ժողովուրդը իրավունք ունի իմանալու ճշմարտությունը եւ հատկապես խնդրի անմիջական պատասխանատու Նոր Ջուղայի թեմական խորհրդից եւ թեմի առաջնորդ Բաբկեն արք. Չարյանից սպասում է հստակ բացատրություն:

Թղթակից

Հայերի կյանքների վկայությունները՝ ցավի ու սարսափի զգացումների աղբյուր

Վատիկանը համահրատակարիչ է դառնալու մի գրքի, որն աբխարհին կներկայացնի փաստաթղթեր եւ տեղեկություններ Հայոց ցեղասպանության մասին: Ինչպես տեղեկացնում է «Ասպարէզ» պարբերականը, ներկայացվելիք նյութերը վերցված են Վատիկանի գաղտնի արխիվներից, եւ ըստ արխիվների վերահսկողությունն իրականացնող քահանա Սերժիո Պագանոյի՝ այդ նյութերը սփոփել են նրան «ամոթ զգալ մարդ լինելու համար»: «Եթե առանց հավատի նայեի, դրանք ինձ կսիրտեին միայն մթություն տեսնել», ասել է իտալացի քահանան:

Ցեղասպանության մասին պատմող փաստաթղթերի առնչությամբ տպավորությունները Պագանոն ներկայացրել է հաջորդ տարի փետրվարին Հռոմում կայանալիք «Lux in Arcane» ցուցահանդեսի մասին հայտարարման ժամանակ: Այդ ցուցահանդեսում կներկայացվեն 8-20-րդ դարերի փաստաթղթերի հավաքածուներ, որոնք մեկ գծով կծածկեն 85 կիլոմետր:

Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանությանը, ապա Պագանոն նշել է. «Երբ կարդում եմ թուրքերի կողմից հայերին կյանքներեն զրկելու մեթոդների մասին փաստաթղթերը, ցավի ու սարսափի անզսպելի զգացում եմ ունենում»: Քահանան տեղեկացրել է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի վերաբերյալ փաստաթղթերը պատրաստ կլինեն 2-3 տարում, այդուհետեւ Հռոմի պապը կորոշի՝ հրապարակել դրանք, թե՞ ոչ:

Ա. Հ.

Forbes-ի դիլետանտ գնահատականը Հայաստանին

Forbes ամսագիրը հրապարակել է աշխարհի վատագույն տնտեսություն ունեցող երկրների ցանկը՝ հիմնված վերջին երեք տարիներին պետությունների համախառն ներքին արդյունքի աճի, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցիչի եւ ներկա առեւտրային հաշվեկշռի վրա: Հայաստանը, ԱՊՀ երկու ուրիշ պետությունների՝ Ուկրաինայի եւ Ղրղզստանի հետ, հայտնվել է վատագույն տնտեսություն ունեցող երկրների տասնյակում (երկրորդ հորիզոնականում): Ընդ որում՝ Հայաստանի եւ Ուկրաինայի այդ ցուցակում հայտնվելը բացատրվում է տնտեսական ճգնաժամով: 7 տոկոս արժեզրկում, ՀՆԱ-ի 3000 դոլարանոց ցուցիչ, Հայաստանի կախվածություն էներգակիր ունեցող երկրներից եւ բազմաթիվ այլ գործոններ պայմանավորել են Հայաստանի տնտեսության՝ ըստ Forbes-ի ներկա վատ տնտեսական վիճակը:

Հատկանշական է, որ մեկ տարի առաջ վատթարագույն տնտեսությունների ցանկի պատկերը միանգամայն ուրիշ էր: Առաջին տեղը զբաղեցնում էր Զիմբաբվեն, երկրորդը՝ Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, երրորդը՝ Գվինեան: Ներկայիս առաջատար Մադագասկարը 10-րդ տեղում էր, իսկ Հայաստանը եւ Ուկրաինան վատագույնների ցանկում առհասարակ չկային:

Ակնհայտ է, որ ուսումնասիրությունը պատրաստած Դանիել Ֆիշերը դիլետանտ է, նա պարել է անգամ հայացք գցել նույն ամսագրի անցյալ տարվա տվյալներին Հայաստանի մասին: Ավելին՝ իր ասածն ապացուցող ոչ մի տվյալ չի ներկայացրել: Այլ՝ հենց այնպես կազմել է մի ցուցակ, որից քաղաքական պատվերի գարշելի հոտ է փչում:

Մ. Խ.

Մի քանի խորհուրդ՝ շոգին դիմակայելու համար

Ինչպե՞ս դիմակայել շոգին: Երեկ «Հայելի» ակումբի բանախոսն անդրադարձավ հենց այս թեմային: ԱՆ պետական հիգիենիկ ու հակահամաճարակային տեսչության պետ Արտավազդ Վանյանը շոգ եղանակին կապված 2 խնդիր է առանձնացնում: Նախ, եթե օդի ջերմաստիճանը կտրուկ բարձրանում է ու գերազանցում մարդու նորմալ կենսագործունեությունն ապահովող միջին ցուցանիշը, այդ դեպքում հնարավոր է, որ մարդկանց մեջ առողջական խնդիրներ առաջ գան: 2-րդ խնդիրը, ըստ պարոն Վանյանի, առաջ են բերում ուլտրամանուշակագույն ճառագայթները, որոնք ունեն ե՛ւ դրական, ե՛ւ բացասական ազդեցություն: Ուլտրամանուշակագույն ճառագայթների փիչ չափաբաժինը բարելավում է օրգանիզմի նյութափոխանակությունը, օգտավետ է եւ ոսկրային համակարգի ձեւավորման համար: Սակայն ամռան շոգին, հատկապես ցերեկային ժամերին ուլտրամանուշակագույն ճառագայթները դառնում են վտանգավոր: «Դրանք մարդկանց մեջ նույնիսկ կարող են առաջացնել մաշկային նորագոյացություններ, կարող են պատճառ դառնալ ջերմության բարձրացման, արտխառնոցի ու փսխումի», ավելացնում է Արտավազդ Վանյանը: Ուլտրամանուշակագույն ճառագայթների ու հատկապես ամառային տաքի հանդեպ ավելի զգայուն են ծերերը, երեխաները, հղի կանայք ու խրոնիկ հիվանդությամբ տառապող մարդիկ: Մասնագետը ռիսկային այս խմբերին խորհուրդ է տալիս դուրս չգալ ցերեկային ժամերին: Իսկ մնացած ազգաբնակչությանը խորհուրդ է տալիս ժամը 12-17-ը չմնալ արեւի ճառագայթների ներքո: Գլխարկները, բաց գույնի հագուստն ու թանը եւս կօգնեն դիմակայելու շոգին:

Տես էջ 2

Լավրով. «Մինսկի խմբի ձեւաչափի փոփոխությունը ապակառուցողականություն է»

Ինչպես երեկ տեղեկացրել է «Ազգը», ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հուլիսի 5-6-ը իր ռուս գործընկերոջ հրավերով գտնվում էր Մոսկվայում: Հունիսի 24-ին Կազանում տեղի ունեցած Սարգսյան-Մեդվեդեւ-Ալիեւ հանդիպումից հետո, սա, փաստորեն, ԼՂ հիմնահարցի շուրջը առաջին բարձրաստիճան հանդիպումն էր, եւ մանավանդ Մոսկվայից շատ կարեւոր էր լսել հանդիպման պաշտոնական գնահատական: Հանդիպումից հետո, ռուսական լրատվամիջոցների տեղեկացմամբ, Լավրովը նշել է. «Նախարար Նալբանդյանի հետ մենք հաստատեցինք, որ Կազանում նախագահները հայտարարել են կարեւոր հարցերում դիրքորոշումների համաձայնեցման մասին, որոնք նպաստում են հակամարտության վերջնական լուծմանը»: Ավելի «կոնկրետացնելով»՝ ԴԳ ԱԳ նախարարը նշել է. «Նախագահ Դմիտրի Մեդվեդեւը, որպես միջնորդ, որը գործում է ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի համաձայնությամբ եւ աջակցությամբ, ավարտել է իրավիճակի վերլուծությունը կազանյան հանդիպումից հետո եւ մոտ ժամանակներս հետագա քայլերի վերաբերյալ որոշում կընդունի»:

Հետաքրքրական է Լավրովի անդրադարձը ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափի փոփոխության հարցին, որը Բաքուն ամեն կերպ փորձում է բարձրացնել: Լավրովը նախ ընդգծել է. «Մինսկի խմբի համանախագահները պարբերաբար հանդիպումներ են ունենում հակամարտության կողմերի հետ՝ այցելելով Երեւան, Բաքու եւ Ստեփանակերտ»: Իհարկե, մինչ այս էլ հասկանալի էր, թե ինչու եռանախագահներից ոչ որ հակամարտության «երկու» կողմ չի նշում, այլ կողմեր, բայց նման պարզաբանում, թե կողմերը քանիսն են ու «երրորդն» ով է, դեռ կարծես թե չէր հնչել՝ այն էլ ԴԳ ԱԳ նախարարից: Այնուհետեւ Լավրովը շեշտել է, որ հակամարտության խաղաղ բանակցությունների նման վճռորոշ փուլում Մինսկի խմբի ձեւաչափի փոփոխությունը ապակառուցողականություն է. «Որպես կանոն նման խոսակցությունները ցրում են ուշադրությունը բուն խնդրից, ինչը ապակառուցողականություն է»: Իր հերթին ՀՀ ԱԳ նախարար Նալբանդյանը ընդգծել է, որ «Իմաստազուրկ է ԼՂ հիմնահարցը տեղափոխել այլ այսպիսի՝ զանազան խորհրդարանական ասամբլեաներ կամ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա: Ոչ մի խորհրդարանական ասամբլեա կոչված չէ լուծելու հակամարտություն: Հետեւաբար խելամիտ չէ այսօր խոսել Մինսկի խմբի ձեւաչափի փոփոխությունից: Մենք համակարծիք ենք համանախագահների հետ, որ առկա ձեւաչափը, որը բավական արդյունավետ գործել է վերջին տարիներին, պետք է պահպանել», ընդգծել է Նալբանդյանը:

Հատկանշական է, որ ադրբեջանական ԶԼՄ-ները մանրակրկիտ չեն անդրադարձել Լավրով-Նալբանդյան հանդիպմանը, միայն վերջիններիս համար ելույթ է ունեցել երգիչ, Մոսկվայում Ադրբեջանի դեսպան Փոլադ Բյուլբյուլօղլին. «Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովը առաջիկայում կլինի Մոսկվայում, նախատեսված է նաեւ ԴԳ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի այցելությունը Բաքու», «Թրենդ» գործակալության փոխանցմամբ՝ նշել է Բյուլբյուլօղլին:

Հ. ԱՓՅԱՆ

Լավրովն ինչո՞ւ է այցելում Բաքու

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

«Դիվանագիտական աղբյուրը» 1news.az-ին ասել է, որ «հուլիսի 8-ին, որպես Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների Կազանի հանդիպման շարունակություն, Բաքու կայցելի ԴԳ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը»:

Խոսքովանենք, որ Կազանի «տաքալված հանդիպման» մասին վերջին շրջանի ամենատարբեր վերլուծությունների, մեկնաբանությունների եւ կանխատեսումների համապատկերին սա խիստ ընդգծվող տեղեկատվություն է: Մանավանդ եթե նկատի առնենք, որ Սերժ Սարգսյանը Կիեւում ասել էր, որ Ռուսաստանի նախագահ Մեդվեդեւը գրավոր ներկայացրել է ղարաբաղյան կարգավորման իր տեսլականը, մինչդեռ ադրբեջանական կողմը չէր հաստատել՝ նման ուղերձ նաեւ Իլհամ Ալիեւի՞ն է հղվել, թե՞ ոչ: Էական է նաեւ, որ մինչ այդ ասվել էր, որ Ռուսաստանի արտգործնախարարը Մոսկվայում առանձին-առանձին կհանդիպի իր հայ եւ ադրբեջանցի պաշտոնակիցների հետ, իսկ նույն Մոսկվայում խորհրդաժողովներ անցկացնելուց հետո տարածաշրջան կայցելեն ԵԱՀԿ ՄԽ համանախագահները:

Տեղեկատվական միջավայրն, այսպիսով, որեւէ արտակարգ զարգացում չէր հուշում: Մինչդեռ Սերգեյ Լավրովի այցը Բաքու, այն էլ՝ «որպես Կազանի հանդիպման շարունակություն», այն է, ինչին որեւէ փորձագետ, ըստ երեւույթին, չէր սպասում: Քանի որ, կրկնենք, իշխող տպավորությունն այն է, որ «Կազանի հանդիպումը տաքալվել է»:

Որեւէ նախանշան չկա, թե խնդրի վերաբերյալ կողմերի, բայց հատկապես՝ պաշտոնական Բաքվի հրապարակային դիրքորոշման մեջ փոփոխություն տեղի է ունեցել: «Աշխարհի ադրբեջանցիների» համագումարի ելույթում Իլհամ Ալիեւը թույլ տվեց հերթական անհեթեթությունը եւ ասաց, որ «Լեռնային Ղարաբաղ հայերը հյուր են եկել»: Սա թերեւս «պատասխան» էր Սերժ Սարգսյանի հայտարարությանը, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը միջազգային հանրության կողմից ճանաչված սուբյեկտ է եւ պետք է իրացնի ինքնորոշման իրավունքը:

Ուշադրության է նաեւ «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում Բակո Սահակյանի այն միտքը, որ «մենք գտնվում ենք մի փուլում, որտեղ ՀՀ-ն լուրջ քայլեր է գործադրում, որպեսզի Արցախը բանակցությունների մասնակից դառնա»: Ըստ ամենայնի, սա Կազանի հանդիպմանն Արցախի նախագահի գնահատականն է, ինչից կարելի է ենթադրել, որ եթե եռակողմ հանդիպումն արդյունավետ լիներ, ապա դրան պետք է հետեւեր բանակցային ձեւաչափի փոփոխություն: Այսինքն՝ հետագա բանակցություններին ԼՂՀ մասնակցությունը պետք է դիտվեր որպես անփուսափելիություն:

Ըստ երեւույթին, հենց այս հանգամանքն է պատճառ դարձել, որ Իլհամ Ալիեւը «մոտ մեկ տասնյակ նոր առաջարկություններ ներկայացնի»՝ այդ կերպ արգելափակելով հիմնական սկզբունքների շուրջը համաձայնության ձեռքբերումը: Նման ենթադրության համար որոշակի հիմք է տալիս նաեւ ԵԱՀԿ ՄԽ համանախագահների հայտարարությունը, որտեղ ասված է, թե «տարաձայնությունները չպետք է խոչընդոտեն, որպեսզի կողմերը համաձայնության գան հիմնական սկզբունքների շուրջը»:

Տես էջ 2

Նախագահը Արարատի մարզում էր

Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ աշխատանքային այցով մեկնել է Արարատի մարզ: Ինչպես տեղեկանում ենք նախագահի պաշտոնական կայքէջից՝ Սերժ Սարգսյանն այցելել է Արարատի ոսկու արդյունահանման ֆաբրիկա, որտեղ «Գեոպրոմայնինգ» ընկերությունը նախատեսում է նորարարական տեխնոլոգիայի ներդրմամբ Արարատի ոսկու արդյունահանման նոր՝ «Ալբիոն» ֆաբրիկայի կառուցումը, որը շահագործման կհանձնվի 2013թ.: Մինչ «Գեոպրոմայնինգ» ընկերության գործունեության արդյունքներին եւ ֆաբրիկայի շինարարական նախագծերին ծանոթանալը նախագահ Սերժ Սարգսյանը շրջել է գործարանի արտադրամասերում, ծանոթացել աշխատանքային պայմաններին եւ արտադրական գործընթացին: Նախագահ Սարգսյանին ներկայացվել է, որ «Գեոպրոմայնինգ» ընկերության կողմից «Ալբիոն» նորարարական տեխնոլոգիայի ներդրումն ուղղված է ձեռնարկության արտադրական արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես՝ նոր տեխնոլոգիան հնարավորություն կտա զգալի չափով մեծացնել մետաղի կորզումը Սոթքի հանքավայրի դժվար կորզվող սուլֆիդային հանքաքարից: Ձեկուցվել է, որ, իբր, արտադրության արդիականացման ծրագրով նախատեսված միջոցառումները համապատասխանում են միջազգային բնապահպանական չափանիշներին:

«Գեոպրոմայնինգ» ընկերության նախագահ Ռոման Խուդոլիյը եւ «Էքսրատա» ընկերության ներկայացուցիչ Մայք Հորնը ստորագրել են համաձայնագիր՝

«Ալբիոն» նորարարական տեխնոլոգիայի օգտագործման լիցենզիան Արարատի ոսկու արդյունահանման ֆաբրիկային տրամադրելու վերաբերյալ, այնուհետեւ տեղի է ունեցել նոր ֆաբրիկայի հիմնարկեքի արարողությունը:

Աշխատանքային այցի շրջանակում նախագահ Սերժ Սարգսյանն Արարատի մարզպետարանում մարզպետ Էդիկ Բարսեղյանի եւ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանի հետ քննարկել է մարզի սոցիալ-տնտեսական խնդիրները:

Հ. Ա.

ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է Նիկոլայ Բորդյուժային

Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի իրավասու մարմինների ղեկավարների խորհրդի 10-րդ նիստի աշխատանքներին մասնակցելու նպատակով Հայաստանում գտնվող ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժային:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀԱՊԿ շրջանակներում համագործակցության խթանմանը, ռազմատեխնիկական եւ ռազմարդյունաբերական համագործակցության խորացմանն առնչվող հարցեր:

Անդրադարձ է եղել թմրամիջոցների եւ թմրամոլության դեմ պայքարի խնդիրներին եւ այդ համատեքստում արդի մարտահրավերների դիմակայմանը վերաբերող հարցերի լայն շրջանակի:

ԱԱԽ մամուլի քարտուղարություն

Շվեյցարահայ թեմը եկեղեցական համայնքային խորհուրդ ունի արդեն

Շվեյցարահայ թեմի առաջնորդական տեղապահ Մեսրոպ վարդապետ Պարսամյանի աղոթքով ու օրհնությամբ հունիսի 16-ին տեղի է ունեցել Հայաստանի առաքելական եկեղեցու Ժնեւի ու Լեմանի շրջանի համայնքի ընդհանուր հիմնադիր ժողովը: Ներկայացնելով համայնքում տիրող անհանգիստ կացությունը եկեղեցական-համայնքային խորհրդի նախագահ Արտեն Շելեֆյանն ու ժողովի մնացյալ մասնակիցները (Աղավնի Արմաքեր Պաղճյան, Անի Ղազարյան, Ֆլավիան Այկենզաց, Արեւ Սալամոլար-Յըլսզ, Անահիտ Օհաննեսյան, Տիգրան Յազմաճյան, Վահիկ Բաղրամյան) կարեւորեցին համայնքում խաղաղության, կայունության եւ սիրո վերստեղծումն ու Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Ամենայն հայոց կաթողիկոսության հեղինակության վերհաստատումը:

Հիշեցնենք, որ Շվեյցարիայում հայոց թեմի հիմնադրման խնդրանքով 1985-ին Շվեյցարիայի հայկական համայնքը դիմում է Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին՝ խնդրելով Ժնեւի Սուրբ Հակոբ եկեղեցու գործունեության իրավունքը, ձեռնամուխ լինի համայնքի անդորր կյանքի վերահաստատմանն ու աղահովի ծիսական կյանքի բնականոն ընթացքը:

Հիշեցնենք, որ Շվեյցարիայում հայոց թեմի հիմնադրման խնդրանքով 1985-ին Շվեյցարիայի հայկական համայնքը դիմում է Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին՝ խնդրելով Ժնեւի Սուրբ Հակոբ, Ցյուրիխի, Նեոշաթելի եւ Լուգանի ծխերի հիման վրա թեմ ձեւավորել: Թեմը ձեւավորվում է 1992-ին՝ Վազգեն Ա կաթողիկոսի կարգադրությամբ: 1993-ին հռչակված նոր վարչությունը որոշում է հրաժարվել թեմական կառույցից՝ ցանկություն հայտնելով վերադառնալ ծխական համայնքին եւ ապրել այդ կանոնադրությամբ: 1994-ին Աբել քահանա առանց կաթողիկոսի թույլտվության եւ գիտության, Կանադայի իր ծառայության վայրից ժամանում է Շվեյցարիայի թեմ ու քահանայական գործունեություն ծավալում: Ներկա եւ նախկին կաթողիկոսների բազմաթիվ նամակներ՝ հանդիպել ու քննարկել համայնքի հետ կապված հարցեր, մնում են անպատասխան, եւ Հայ առաքելական եկեղեցու հանդեպ անհարգալից վերաբերմունքի եւ օրենքի խախտման համար Աբել քահանան կարգալույծ է հռչակվում: Նրան փոխարինած Մեսրոպ վարդապետ Պարսամյանին կարգալույծ հռչակված քահանան ու նրա կողմնակիցները արգելում են եկեղեցի մտնել:

Հ. Հ.

Լավրովն ինչո՞ւ է այցելում Բաքու

1-ին էջից

Համանախագահներն այսպիսով կարծես «հիմնական սկզբունքները» գնահատում են որպես «տարաձայնություններից դուրս»: Գրեթե «իրողություն», որի շուրջը կարելի է գալ համաձայնության, իսկ տարաձայնությունները թողնել հետագա փուլերին, երբ «կսկսվեն համապարփակ պայմանագրի մշակման աշխատանքները»:

Խնդիրն այն է, սակայն, որ, դատելով Բակո Սահակյանի ասածից, այդ աշխատանքները չեն կարող սկսվել առանց Արցախի մասնակցության, եւ ներկա փուլում ՀՀ-ն ջանքեր է գործադրում, որ ԼՂՀ բանակցություններին ներգրավվածությունը պաշտոնականացվի: Թերեւս հենց դա է, որ Էլմար Մամեդյարովը համարել է Կազանում «Ադրբեջանից առավելագույն զիջումների պահանջ»:

Ակնհայտ է, որ ՌԴ արտգործնախարարը Բաքու է ժամանում ոչ թե Մամեդյարովի, այլ անմիջապես Իլհամ Ալիեւի հետ բանակցելու: Դրա համար է, որ նրա այցը համարվում է «Կազանի հանդիպման շարունակություն»: Լավրովը Բաքու է մեկնում ՌԴ նախագահի հանձնարարությամբ, բանակցելու է նրա անունից:

Ինչ-որ իրավիճակային փոփոխություն, կարծես, տեղի է ունենում: Այլ դեպքում Կազանի «տաղալված հանդիպումից» երկու շաբաթ անց Սերգեյ Լավրովը Բաքու չէր ուղեւորվի: Կհաջողվի՞ Լավրովին «նատուրալացնել» դա: Թվում է՝ այն իրավիճակում, որի մասին ենթադրաբար կարելի է պատկերացնել՝ դատելով վերջին օրերի տեղեկատվական նրբապացություններից, Ռուսաստանը հնարավորություն ունի Իլհամ Ալիեւին հասկացնելու, որ Լեռնային Ղարաբաղում հայերը ներկայացնում են իրական ուժ, որի հետ բանակցելն ուղղակի անհրաժեշտություն է:

Եվ հավանաբար դրան կհետեւեն «մինչեւ տարեվերջ եւս մեկ բարձր մակարդակի եռակողմ հանդիպում կազմակերպելու» մասին դիվանագիտական խորհրդատվությունները: Թեեւ, անկեղծ ասած, շատ դժվար է հավատալ, որ Լավրովի առաքելությունը հաջողությամբ կպսակվի:

ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ

Կաթողիկոսն ընդունեց մանկավարժական բուհերի կոնսորցիումի անդամներին

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ Հայաստանի մանկավարժական բուհերի կոնսորցիումի հերթական նիստը՝ կոնսորցիումի հոգաբարձուների խորհրդի նախագահ, ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի նախագահությամբ: Կոնսորցիումի նիստին

մասնակցում էին Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Վարդեւան Գրիգորյանը, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը, Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Յուրի Սաֆարյանը, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի պրոռեկտոր Ֆրունզ Ղազարյանը եւ Արցախի պետական համալսարանի պրոռեկտոր Վահրամ Բալայանը:

Արցախի պետական համալսարանն այս նիստի ընթացքում դարձավ Հայաստանի մանկավարժական բուհերի կոնսորցիումի անդամ:

Նիստում քննարկվեցին Միջբուհական կոնսորցիում հիմնադրամի կարգավիճակը, կանոնադրությունից բխող գործառույթները, նպատակներն ու հեռանկարային զարգացումը: Կոնսորցիումի զարգացմանը վերաբերող հարցերը ներկայացրեց հոգաբարձուների խորհրդի նախագահ Ռուբեն Միրզախանյանը: Քննարկվեցին նաեւ միջբուհական կոնսորցիումի համալսարանների կարգավիճակի բարձրացման եւ միջազգային չափանիշներին համապատասխանեցման վերաբերյալ ՀՀ կառավարությանը ներկայացված առաջարկություններից բխող գործունեության եւ ժամանակացույցին վերաբերող հարցեր: Հիմնադրամի տնօրեն ընտրվեց հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նաիրա Հակոբյանը:

2 ժամ տեւած նիստից հետո կոնսորցիումի անդամները մեկնեցին Մայր աթոռ Սուրբ Էջմիածին, որտեղ նրանց ընդունեց Ամենայն հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդը: Վեհափառը կարեւորեց մանկավարժական բուհերի գործունեությունը ադագա սերնդի դաստիարակության գործում եւ ընդգծեց Հայ առաքելական եկեղեցու պատմության դասավանդման անհրաժեշտությունը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց ստեղծելու աշխատանքային խումբ, որը կմշակի մանկավարժական համալսարաններում Հայ առաքելական եկեղեցու պատմության դասավանդման ուսումնական ծրագիր: Դրանով կառաջնորդվեն կոնսորցիումի անդամ բոլոր բուհերը:

Ռուբեն Միրզախանյանը կոնսորցիումի անունից Ամենայն հայոց կաթողիկոսին նվիրեց «Բարոյախոսություն ըստ Անուշի» գրքերեն աշխատանքը, որի վրա հեղինակը՝ ՀՊՄՀ դիզայնի եւ դեկորատիվ կիրառական արվեստի ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անուշ Եղիազարյանը, աշխատել էր ավելի քան 10 տարի:

Մի քանի խորհուրդ...

1-ին էջից

Ամռանն օրգանիզմն ավելի շատ աղեր ու սպիտակուցներ է կորցնում, քանի որ քրտնարտադրությունն ավելանում է, հետեւաբար հարկավոր է հեղուկներ ավելի շատ օգտագործել: Պարոն Վանյանը զգուշացնում է՝ հեղուկներն էլ չպետք է չափից դուրս սառը լինեն. «Ամռանը նաեւ պետք չէ չարաշահել կոֆեին ու շաքար պարունակող ըմպելիքները: Նաեւ պետք է խուսափել ոչ սառնարանային պայմաններում վաճառվող սնունդ գնելուց»: Շոգ եղանակը պայմաններ է ստեղծում, որ վարակիչ հարուցիչներն ավելի արագ զարգանան ու պատճառ դառնան սննդային զանազան թունավորումների: Օդորակիչներից եւս պետք է զգույշ լինել, երբեմն դրանք տեղադրված են լինում սխալ տեղերում եւ կարող են առաջացնել մրսածություն: Արտավազդ Վանյանը նաեւ խորհուրդ տվեց ծնողներին թույլ չտալ, որ երեխաները լողանան դեկորատիվ ջրավազաններում, քանի որ նման ջրավազաններից նույնպես հնարավոր է ձեռք բերել ինֆեկցիոն հիվանդություն:

Վերջում բանախոսը, պատասխանելով լրագրողների հարցերին, ասաց՝ Հայաստանում շոգից մահվան դեպքեր դեռեւս չեն գրանցվել. «Սակայն մաշկային նորագոյացության առաջացում գրանցվել է»: Ինչ վերաբերում է շոգի պատճառով աշխատաժամերը կրճատելուն, պարոն Վանյանն ասում է՝ այս տարի դեռ չի արձանագրվել այնքան բարձր ջերմաստիճան, որի պատճառով կրճատվեն աշխատանքային ժամերը:

Ի. Պ.

Վահագն Ստամբոլցյանի թաղման առիթով ստեղծվել է կառավարական հանձնաժողով: Հոգեհանգիստը տեղի կունենա այսօր, ժ. 18:00-20:00 Նորագավիթի Սբ Գեւորգ եկեղեցում: Վերջին հրաժեշտը՝ վաղը, ժ. 12-ից Կամերային երաժշտության տանը: Հուղարկավորությունը ժ. 14-ին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Վերջաբան

Մազալու գերհաղթակիրթ առեւտուր

Մայնի Ֆրանկֆուրտից նոր վերադարձած ազգականներս պատմում են, որ շաբաթօրյա Ֆրանկֆուրտի առօրյան տարբերվում է լի օրերից նրանով, որ այդ օրը տոնավաճառի օր է. հատուկ բաց շուկաներում մոտակա գյուղական բնակավայրերի ֆերմերները վաճառում են ինչ ունեն՝ գյուղատնտեսական աղրանք, միրգ, բանջարեղեն, երշիկեղեն եւ գինի՝ գերմանական հայտնի խնձորի գինի՝Apfelweine-ն, համարյա կրկնակի էժան խանութների գներից: Այդ շուկաներն ազատ են հարկերից, գյուղացի ֆերմերը հասցնում է իր ցանկացած գնով իրացնել իր ստեղծած բարիքը, իսկ քաղաքացին շաբաթ օրը շատրվում է տոնավաճառ, ողջ շաբաթվա համար գնում միրգ, բանջարեղեն, կաթնամթերք ու անգամ մսամթերք, իսկ լի օրերին այդ նույն աղրանքը խանութից գնում է անհրաժեշտության դեպքում միայն:

Հիմա մեր քաղաքային իշխանություններին ուզում եմ հարցնել՝ Ֆրանկֆուրտի շաբաթօրյա տոնավաճառները, որ բաց երկնքի տակ են եւ քաղաքի բանուկ մասերում, մերի չափ սուպերքաղաքակիրթ առեւտուր չե՞ն, հա՞: Թե՞ հասարակ երեւանցին ավելի լավ է աղրում հասարակ ֆրանկֆուրտցուց, ու պետք է դժվարությամբ վաստակած փողը հատկապես տանի ու թողնի թանկուկրակ սուպերմարկետներում:

Մինչեւ մեր հիմնական ասելիքին անցնելը՝ մի օրինակ էլ բերեմ այսօրվա Մոսկվայից, որ չասեն, թե սխալ քաղաքի հետ սխալ դրվեցի մեկնում: Հենց երեկ Մոսկվայի քաղաքապետը կարգադրել էր, որ բացի շաբաթ օրերից, տոնավաճառի օր լինեն նաեւ ուրբաթ օրերը, ընդ որում՝ ենթակառուցվածքները Մոսկվայի քաղաքապետարանը տրամադրում է անվճար ու մեն-միակ ցանկությամբ, որ մոսկվացին կարողանա առավել էժան ձեռք բերել հարկավոր գյուղատնտեսական մթերքը, իսկ քաղաքային իշխանությունները պատրաստ են ոչ միայն դրա համար անվճար տարածքներ տրամադրել ռուս գյուղական ֆերմերին, այլ նաեւ կիրակի առավոտյան սրբելմաքրել այդ տարածքները տոնավաճառային երկօրյա աղբից այնպես, ասես ոչ մի տոնավաճառ էլ չի եղել:

Հիմա հասնենք երեւանյան իրականություն: Փողոցներում առեւտուրն իսկապես տգեղ էր, ամեն քայլափոխին՝ ուր ասես ինչ ասես վաճառում էին հենց փողոցի կեղտի մեջ: Վերացրինք: Արգելելուց ավելի հեշտ բան՝ Տեղն ի՞նչ է առաջարկվել ի վերջո՝ դասարկ ջուրծեծոցիից բացի: Ոչինչ: Առայժմ ոչինչ: Որ վերացնում էին, ու փողոցային առեւտրով զբաղվողները բողոքում էին, առանձնապես էնտուզիազմ չդրսեւորեցինք նրանց պաշտպանելիս, քանի որ մտածում էինք՝ լավ, քաղաքակիրթ առեւտուր է ուզում գուցե քաղաքային իշխանությունը, դե մենք էլ դեմ չէինք այդ քաղաքակիրթին: Մտածում էինք, որ սուպերմարկետները, մեծ խանութները, միակ առեւտուր անողները դառնալով, գուցե մրցակցության կանոններով կիջեցնեն գները, եւ գնորդը չի տուժի, այլ ընդամենը ... կշահի՝ փաթեթավորված աղրանք եւ տանելի գին ստանալով: Սակայն ճիշտ դուրս եկան հոռետեսները, նրանք, ովքեր ասում էին, թե քաղաքային իշխանություններն ընդամենը օլիգարխների բիզնես -շահերն են պաշտպանում: Քանի որ խանութների դիմացի մայթերին փողոցային առեւտրով զբաղվողներն անցան ընդհատակ (հիմա նրանք ծիկրակելով ու ոստիկաններից թաքնվելով՝ խանութներից շատ ավելի էժան աղրանք են առաջարկում), խանութներում, ու հատկապես գին թելադրող մեծ խանութներում ոչ մի էժանացում էլ տեղի չունեցավ, միրգն ու բանջարեղենն էս ամառվա կեսին խանութում թանկուկրակ են հունիսի սկզբի գների պես, ընդ որում՝ նաեւ այն տեսակներին է թանկ, որն այս տարի լավ բերք է տվել ու եթե գյուղացուց ուղի՛ղ հասներ գնորդին՝ ե՛ւ աչք կկշտացներ, ե՛ւ հայ տանտիրուհիների սիրած՝ պահածոների դարակները կլրացներ: Մինչդեռ խանութ մտած մարդը, ծիրանը վերջանում է՝ դեռ 500 դրամից պակաս ծիրան չի տեսել, կեռասը եւ բալը դալաններից ծիկրակող կանայք 300 դրամով են առաջարկում, խանութներում 600-700 դրամ են: Նույնը վերաբերում է բանջարեղենի եւ մրգի բոլոր տեսակներին: Ու կամաց-կամաց մոռացվում է 100-150 դրամանոց լոլիկ-վարունգը, մրգի երկրում՝ մրգին կարոտ ես մնում: Սա արհեստական իրավիճակ է, որ ստեղծվել է մի շարք հետեւողականորեն իրար հետեւից ընդունված որոշումներով, որոնց իմաստը ոչ թե քաղաքացուն կամ արտադրողին աջակցելն ու սատարելն է, այլ մի խումբ խանութատերերի համար գերշահույթ ստանալու հուռթի պայմանների ստեղծումը: Ուրիշ բացատրություն չի ծագում, այլապես Մոսկվայի կամ Ֆրանկֆուրտի (եւ աշխարհի հարյուրավոր այլ քաղաքների) իշխանությունների նման՝ մերոնք էլ կմտածեին հարմարություններ ստեղծել ոչ թե մի քանի սուպերմարկետի տերերի, այլ քաղաքի մեկ միլիոն բնակչության համար, ինչու ոչ՝ նաեւ գյուղացի արտադրողի մասին կմտածեին: Ձեռնպահ կմնային օգնելու փոխարեն մարդկանց խանգարելուց՝ հարմար, էժան, փոխշահավետ առեւտրական հարաբերություններ ծավալելու, որ մի կողմն իր աղրանքն իրացնի, մի քանի կարիք հոգա ու չլրացնի դժգոհ հանրահավաքավորների շահերը, մյուս մասը գնե սեզոնին տանելի գնով միրգ կուտի, համեմատաբար էժան պահածո ու կոմպոտ կփակի ու էլի չլրացնի դժգոհ հանրահավաքավորի շարքը: Առաջինը 10-20 դրամով վարունգ, 100-150 դրամով ծիրան չի հանձնի, որ հետո սուպերմարկետում նույն վարունգը՝ 200-300, ծիրանը 600-700 դրամ արժենա, առաջինը տասնապատիկ չտուժի, խանութատերը տասնապատիկ չշահի, գնորդն էլ անվերջ նոկաուտի մեջ լինի: Իմ թաղի օրինակը բերեմ. Ավան-Առինջում կա մի քանի լայն հարթակ, որը գոնե երեք ամիս՝ հուլիսի 1-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը կարելի էր տրամադրել բուն գյուղական արտադրողին՝ առանց վճարի (կամ սիմվոլիկ վճարով), առանց շուկա նայողի (սրանք բոռեր են, որ ամենուր են, սրանց ինստիտուտը դեռ չի վերացել): Հասկացանք, որ օրեցօր թաղամասում ավելացող գիգանտ-խանութների տերերը պետք է շահույթ ստանան, իրարից գնորդ փախցնեն, գնորդի ձեռքից էլ վերցնեն նրանց մի քանի դրամը, բայց եթե գնորդը վճարունակ չէ, էդ դմբդմբ խանութներն ինչի՞ համար են կամ ինչու պիտի էդ դմբ-դմբ խանութների ու դրանց տերերի ախորժակի պատճառով հասարակ ավանառինջցին 150-200-ի փոխարեն նորմալ ծիրանը գնի 500 դրամով: Շատ էլ որ շուկան էդ դմբ-դմբ խանութների պատճառով վերացրին, իբր՝ փողոցային առեւտուր է: Սակայն գոնե կարելի է հենց եվրոպական քաղաքակիրթ քաղաքների փորձը եւ միայն ամռանը, միայն մի քանի ամսով, միայն տոն օրերին թույլ տալ, որ քաղաքացին ու գյուղացին իրար հետ շփվեն առանց ագահի միջնորդի, չմտնեն մատի ու մատանու արանքը, զսպեն գերշահույթի ախորժակը ու թույլ տան ուրիշներին եւս շնչել:

Երեւանն ու երեւանցին կարիք ունեն ոչ միայն դասարկ կարգախոսների, զանազան հավակնոտ եւ ամպագոռգոռ ելույթների, զանազան անկապ նախաձեռնությունների՝ միայն թե տակից ինչ-որ մեկի բիզնես շահը սպասարկվի, այլ հարմարության, հոգածության, եւ ունեցած սուղ միջոցները արդյունավետ ծախսելու հնարավորության: Ջենք առաջարկում ուզած փողոցում, առաջվա ձեւերով փողոցային առեւտուր: Առաջարկում ենք սահմանափակ թվով տարածքներում գյուղմթերքի, իսկ ավելի ստույգ՝ մրգի ու բանջարեղենի սեզոնային, ժամանակավոր, տոնավաճառային առեւտրի կազմակերպում, որով կմեղմվի թանկությունների պատճառով առկա լարումը, կնվազի դժգոհությունն իշխանությունից, գյուղացուն հնարավորություն կտրվի գոնե մասամբ իրացնել իր ստեղծած բարիքն ու չբռնել արտագնա վաստակի մեկնելու ուղին, իսկ քաղաքացու աչքն ու բերանը մի բան կմտնի: Արեւային երկրում, կլիմայի ու բնության պարգեւած բարիքից նորմալ ու տանելի գնով օգտվելու հնարավորությունից մարդկանց զրկելը անխելամիտ քայլ է, որ իշխանության միավորների գրքում մինուս նշանով թվեր է միայն գրանցում:

Ամառն անցնում է, գոնե հուլիսի կեսից տոնավաճառային առեւտրի կազմակերպմամբ կարելի կլինի մտնել երեւանցիների աչքը (տոնավաճառ, հիշեցնում ենք, նշանակում է տոն օրվա առեւտուր միայն): Իսկ գաղափարին բացասաբար վերաբերվող, համառող քաղաքային իշխանությունների վրա կմնա զարմանալ՝ էս մեր իշխանություններն իրենք իրենց թշնամի՞ն են:

ՄԱԲԻԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Նոր ավանդ՝ «արձակուրդային» «Արդշինվեստբանկից»

Ինչպես տեղեկացանք «Արդշինվեստբանկից», ամառային արձակուրդների կապակցությամբ հուլիսի 1-ից սեպտեմբերի 1-ը բանկն առաջարկում է նոր ավանդ «արձակուրդային»: Ավանդն ընդունվում է դոլարով, բարձր՝ տարեկան մինչեւ 9 տոկոս տոկոսադրույքով: Տոկոսագումարները, ըստ հաճախորդի ցանկության, բանկի կողմից կվճարվեն ինչպես ամենամսյա պարբերականությամբ, այնպես էլ ժամկետի վերջում:

Ցանկության դեպքում «արձակուրդային» ավանդ ներդրած ավանդատուին անվճար կտրամադրվի 30-օրյա տուրիստական ապահովագրություն եւ MasterCard Standart միջազգային վճարային քարտ՝ ներդրված գումարի մինչեւ 90 տոկոս վարկային գծի հնարավորությամբ, որի միջոցով հնարավոր կլինի արձակուրդի ընթացքում լիարժեք ծնօրինել ներդրված գումարները:

Ըստ «Արդշինվեստբանկի» վարչության նախագահի պատասխանատու Կարապետ Գեւորգյանի. «Ներդնելով այս ավանդատեսակը, մենք հնարավորություն ենք տալիս բանկի ավանդատուներին, մեկնելով ամառային հանգստի, իրենց զգալ անհոգ եւ ապահով՝ միջազգային MasterCard Standart քարտի վրա ունենալով ներդրված գումարը, որը միաժամանակ իրենց բերում է բարձր տոկոսադրույքներով եկամուտ»:

Ա. Մ.

Ծառուկյանը՝ վարչապետ, Ծառուկյանը՝ նախագահ

Մի պահ պատկերացնենք, որ երկրում իշխանափոխություն է տեղի ունեցել: Երկրի վարչապետն ու նախագահը հրաժարական են տվել եւ չեն մասնակցում ընտրություններին: «Սոցիոմետր» սոցիոլոգիական կենտրոնի ղեկավար Ահարոն Ադիբեկյանն, իր խոսքերով, «մտային փորձ» է կատարել՝ պարզելու, թե իշխանափոխության ժամանակ ովքեր առավելագույն ձայներ կստանան եւ քաղաքական ինչպիսի դաշտ կձեւավորվի:

«Վաղաժամկետ ընտրությունների դեպքում ո՞ւմ եք առավել հարմար գտնում նախագահի ու վարչապետի պաշտոնում» հարցին պատասխանել է 1650 հարցվածների 32 տոկոսը: Հարցվածների մեծ մասը ԲՀԿ կուսակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանին ցանկացել է տեսնել վարչապետի եւ նախագահի պաշտոններում: «Որպես նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը երկրորդն է, որպես վարչապետ՝ վեցերորդը: Երկրորդ տեղում որպես վարչապետի հարցվածները նախընտրել են տեսնել Ռոբերտ Քոչարյանին»:

Ադիբեկյանի գնահատմամբ՝ հարցման արդյունքները մեծապես կախված են այն փաստից, որ բնակչությանն ավելի շատ մտահոգում են սոցիալական, քան զուտ քաղաքական հարցերը:

«Որ հարցի լուծմամբ կզբաղվեիք, եթե լինեիք երկրի նախագահ» հարցին հարցվածների 91 տոկոսը պատասխանել է՝ սոցիալ-տնտեսական: Մինչ քաղաքական հարցերի լուծումը հարցվածները նախ կլուծեին պետահրավական եւ սոցիալական խնդիրները:

«Քոչարյանի օրոք տնտեսությունը լավ տեմպերով աճում էր: Դա է պատճառը, որ հարցվածների մի սպար զանգված Քոչարյանին տեսնում է վարչապետի պաշտոնում»: Ադիբեկյանի գնահատմամբ՝ ՀՀԿ ներկայացուցիչները հիմնականում խոսում են քաղաքական եւ հատկապես ԼՂ հիմնախնդիրներից, մինչդեռ ԲՀԿ-ն առավելագույն ուշադրություն դարձնում է սոցիալ-տնտեսական հարցերին:

«Եթե մոտ ապագայում լինեն վաղաժամկետ ընտրություններ, ամենաշատը կշահի ԲՀԿ-ն: ՀԱԿ-ը պետք է կռահի այդ ամենն ու հրաժարվի վաղաժամկետի գաղափարից, մինչդեռ հերթական ընտրությունների ժամանակ ՀԱԿ-ն ավելի շատ ձայն կստանա»:

Անդրադառնալով ՀԱԿ-ին՝ Ադիբեկյանը նշեց, որ կոնգրեսի վարկանիշն ավելի բարձր է, քան Լեւոն Տեր-Պետրոսյանինը. ՀԱԿ-ն ավելի շատ կշահի, եթե նոր երիտասարդ թեկնածու առաջադրի: Հենց այդտեղ էլ կայանում է ՀԱԿ-ի պրոբլեմը: Առկա է կադրային խնդիր, իսկ նոր առաջնորդներն են պակասում:

Հ. Հ.

Հ. Գ.- Ընդամենը մեկ տարի առաջ Ահարոն Ադիբեկյանը ավագանու ընտրությունների ժամանակ ինքնադատում էր Գագիկ Ծառուկյանին: Շուրջ մեկ ամիս Ադիբեկյան-Ծառուկյան հակամարտությունն էր, որից հետո Ադիբեկյանը նոր սոցիարցմամբ ներկայացավ ու ասաց, որ ԲՀԿ-ի վարկանիշը բարձրացել է: Այդ ժամանակ մարդիկ կասկածում էին, որ Ադիբեկյանը սարսափել է Ծառուկյանի ... առյուծներից: Արդեն երկրորդ ասուլիսն է, որ սոցիոլոգը խոսում է ԲՀԿ-ի վարկանիշի բարձրացման մասին: Գուցե մեղավորը կրկին առյուծնե՞րն են:

ԳԱՍԱԳՐՔԵՐ

Անհրաժեշտ պարզաբանում

Մեր կյանքի բոլոր ոլորտների բարեփոխումների ճանապարհին չափազանց մեծ դեր ունի կրթության ոլորտը, մասնավորապես, դպրոցական նոր դասագրքերը: Չէ՞ որ այսօրվա աշակերտը վաղը կյանք է մտնելու, եւ դասագրքի ճիշտ ընտրությունը ուսումնառության կարեւորագույն գործոններից մեկն է:

Անկախության հռչակումից ի վեր մեր երկրում, բնականաբար, սկսեցին մշակվել նոր, «ազգային» դասագրքերը: Անշուշտ, այդ գործը դյուրին չէր, եւ եղան նաեւ սխալներ ու վրիպումներ:

«Տիգրան Մեծ» հրատարակչությունը անմասն չմնաց այդ դժվարին գործընթացից. մեր ձեռնարկությունում 1992 թվականից ի վեր տպագրվել է մոտ 200 անուն դպրոցական դասագիրք 15 միլիոն ընդհանուր տպաքանակով: Դասագրքերի ընտրությունը եւս դյուրին գործ չէ, ու միշտ չէ, որ հաջողվում է խուսափել բախումներից, ընդհարումներից:

Դասագրքերի մրցույթներին մասնակցող հեղինակների հետ աշխատում ենք հրատարակիչներս, եւ, բնականաբար, ձգտում ենք անել այնպես, որ դասագիրքը լինի լավագույնը թե՛ բովանդակության, թե՛ ձեւավորման, թե՛ պոլիգրաֆիական կատարման առումով: Մրցակցությունը մեծ է, պարտությունները՝ անխուսափելի: Եվ, ինչպես օրինակ, քաղաքական եւ հասարակական կյանքում, կարեւորն այդ մրցակցության արդյունքները պատվով ընդունելն է: Եվ մենք հենց այդպես ենք վարվել, երբ իմացել ենք, որ ինչ-ինչ գրքերի հրատարակումը մեզ բաժին չի հասել: Այս առումով անընդունելի եմ համարում որոշ դասագրքերի հեղինակների չափազանց զգացմունքային գնահատականները ու մոտեցումները, որ նրանք արտահայտել են մամուլում:

Հարկ եմ համարում փաստել, որ նախարարությունը մրցույթը կազմակերպել է պատշաճ կերպով, ապահովել օբյեկտիվ ու անաչառ մոտեցում՝ հաշվի առնելով թե՛ տեխնիկական, թե՛ որակական եւ թե՛ ֆինանսական չափանիշները:

ՎՐԵԺ ՄԱՐԿՈՍՅԱՆ

«Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն

Աղանդավորները սպառնում են ազգային անվտանգությանը

Տարեցտարի աղանդավորական կազմակերպություններն ավելի ագրեսիվ են դառնում: Շատերը դրանում տեսնում են Հայաստանյայց առաքելական եկեղեցու մեղավորությունը, մարդկանց մի խումբ էլ մեղադրում է իշխանություններին, իրավաբանները ենթադատում են օրենսդրությունը, տարիներ շարունակ խնդիրը բարձրացվում է, սակայն աղանդավորներին որեւէ մեկը զսպել չի կարողանում: Ո՞ւմ է պատճառը, որ աղանդավորները մեր երկրում անպատժելի են, ինչո՞ւ եկեղեցին չի պայքարում նրանց դեմ, ինչքանո՞վ են աղանդները սպառնում ազգային անվտանգությանը: Այս եւ նման հարցերի շուրջը «Ազգը» զրուցեց կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների եւ կրոնի վարչության պետ Վարդան Ասցատրյանի հետ:

«Խղճի ազատության ու կրոնական կազմակերպությունների մասին» օրենքում, ըստ պարոն Ասցատրյանի, պետք է մի շարք փոփոխություններ կատարվեն: Քանի որ աղանդների գործունեությունը հնարավոր է վերահսկել ու կանոնակարգել միայն օրենքի ուժով, հետեւաբար օրենքը պետք է լիարժեք լինի: Բացի նրանից, որ աղանդավորներին պետք է արգելվի տնեսուն գնալն ու քարոզելը, նաեւ հարկավոր է օրենքում հատուկ կետ ավելացնել աղանդները վերահսկելու մասին: «Գործող օրենսդրության մեջ կրոնական կազմակերպությունները վերահսկելու մասին նշված չէ: Օրենքում նրանց պարտականությունների մասին եւս գրված չէ: Նշված են միայն իրավունքները, մինչդեռ իրավունքներն ու պարտականությունները պետք է հավասարակշռեն միմյանց: Չի կարելի օրենքով սահմանել ավելի շատ իրավունքներ, քան պարտականություններ», ասում է պարոն Ասցատրյանը:

Ակներեւ է՝ Հայաստանում աղանդավորները նույնիսկ հօգուտ իրենց գրված օրենքին չեն հետեւում: «Նրանք հաճախ շրջանցում են օրենքն ու զբաղվում հոգեորսությամբ», ասում է զրուցակիցս: Ձանգվածային լրատվամիջոցները բազմիցս անդրադարձել են նրանց սանձարձակ պահվածքին, որն անպատժելի է: Աղանդավորների ագրեսիայի եւ օրինախախտ պահվածքի մասին շարունակ խոսվում է, սակայն, Վարդան Ասցատրյանի խոսքով, սրա առնչությամբ արդարադատության նախարարությունը որեւէ ստուգում չի կատարել. «Նույնիսկ երբ զույգն ամուսնալուծվում է կրոնական համոզմունքների պատճառով, դատական գործընթացը կատարողները ձգտում են չշեշտել իրական պատճառը»:

Թեեւ մեր հասարակությունը աղանդավորների հանդեպ հանդուրժող է, մեզանում էլ հասարակական բողոքք երբեմն հնչում է: Վարդան Ասցատրյանը պատմում է՝ Վանաձորում Եհովայի վկաների տաճարի կառուցմանը շատերը դեմ կանգնեցին, ցույցեր եղան, սակայն տաճարը կառուցվեց, ու հասարակության կարծիքը հաշվի չառան: Պարոն Ասցատրյանն ասում է, որ ՁԼՄ-ներն ու հասարակական կարծիքը ցուցիչ են ծառայում ու ցույց տալիս՝ աղանդավորներն ինչքանո՞վ են հետեւում իրենց իսկ կանոնադրությանն ու երկրի օրենսդրությանը: Նա ընդգծում է՝ աղանդավորների տաճարները պետք է կառուցվեն այնպիսի վայրերում, որոնք հեռու են հասարակական հասատություններից՝ դպրոցներից, մանկապարտեզներից, հիվանդանոցներից ու հասարակական հանգստի վայրերից:

Փաստորեն, մեր երկրում աղանդավորներին ամեն ինչ թույլատրվում է. օրենսդրությունը թերի է, իսկ պատասխանատու անձիք քայքայիչ գործունեության առաջ, մեղմ ասած, «աչք են փակում»: Աղանդավորներն արդեն սպառնում են ազգային անվտանգությանը: Վարդան Ասցատրյանը պատմում է՝ իրենց գաղափարները քարոզելու համար աղանդավորներն օգտագործում են նույնիսկ դպրոցները: Եղել են դեպքեր, երբ մանկավարժն իր դասաժամն օգտագործել է ոչ թե դաս սովորեցնելու, այլ աղանդավորական գաղափարներ քարոզելու համար:

Իսկ նրանց դեմ ինչպե՞ս է պայքարում Հայ առաքելական եկեղեցին: Պատասխանելով այս հարցին՝ զրուցակիցս նշում է, որ եկեղեցին պայքարի ձեւ չի որդեգրել. «Եկեղեցու գործելաոճը հետեւյալն է՝ քարոզել ու տարածել սեփական

ուսմունքն ու այդ ճանապարհով իր հետեւորդներին հավաք պահել իր շուրջը: Սակայն այս գործելաոճի արդյունավետությունը, ինչպես տեսնում ենք, ցածր է»:

Սկզբում սոցիալապես անապահով կյանքից դուրս եկած շատերը համալրում են աղանդավորների շարքերը՝ ակնկալելով նրանցից ֆինանսական աջակցություն: Բայց ժամանակի ընթացքում ձեռք են բերում նաեւ հոգեւոր կախվածություն: Որոշ աղանդներում նոր հետեւորդներ գտնելը խրախուսվում է նույնիսկ գումարով, ուստի շահից դրդված աղանդավորները «որսի» են դուրս գալիս փողոցներում ու հասարակական վայրերում:

Աղանդների քայքայիչ գործունեության ու թերի օրենսդրության մասին անընդհատ բարձրաձայնվում է, սակայն պատասխանատուներն անտարբեր են: Իսկ անփոփոխ օրենքը կարծես ձեռնտու է ոչ միայն աղանդավորներին: Ի՞նչն է նման անհոգության պատճառը: Թերեւս միջազգային այն նորմերն ու կոնվենցիաները, որոնք Հայաստանն ընդունել է: «Այդ կոնվենցիաները պահանջում են աղահովել սեփական աշխատանքային ծառայություն այնպիսի օբյեկտներում, որոնք ենթակա չեն պաշտպանության նախարարությանը, օրինակ՝ ծերանոցներում, տուն-ինտերնատներում եւ այլն: Այլընտրանքային ծառայության զորակոչվածները 24 ամսվա փոխարեն պետք է ծառայեն 42 ամիս: Հիմա Եհովայի վկաները պահանջում են կրճատել ժամկետը եւ 42 ամսվա փոխարեն սահմանել 36 ամիս: «Նաեւ պահանջում են, որ ծառայության ընթացքում չլինեն զինվորական հսկողության ներքո: Դա էլ բավական չէ՝ ուզում են իրենց բոլոր պահանջներից հետո ծառայել ըստ ցանկության: Ուզում են՝ ծառայության գնալը լինի ոչ թե պարտադիր, այլ ամեն մեկի խղճի ազատության հարցը», տեղեկացնում է Վարդան Ասցատրյանը:

Թվարկված պահանջները պետությունը, բարեբախտաբար, դեռ չի բավարարել: Եհովայի վկաները շարունակում են հրաժարվել այլընտրանքային ծառայությունից: Պարոն Ասցատրյանը նշում է՝ հրաժարվելու պատճառով դատական գործեր են հարուցվում, ու Եհովայի վկաները դատապարտվում են ազատազրկման:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Մեր ինքնիշխանության ամենամեծ թշնամին

«Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»: ՀՀ սահմանադրության առաջին հոդվածով կարծես սահմանվում են այն հիմնադրույթները, որոնց վրա պետք է կառուցվի եւ զարգանա պետությունը: Սակայն հաճախ ցանկալի եւ գործող իրականությունները արմատաշրջ տարբերվում են միմյանցից: Իսկ ցանկալին իրական դարձնելու համար նախ եւ առաջ անհրաժեշտ է հասնել ցանկալիի անհրաժեշտության գիտակցմանը: Այսինքն՝ ցանկալին պետք է դառնա անհրաժեշտություն եւ այն էլ գիտակցված անհրաժեշտություն: Նման անհրաժեշտությունը նախ եւ առաջ պետք է արմատանա պետության վերնախավի գիտակցության մեջ: Խոսքը թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական, թե՛ մշակութային վերնախավի մասին է: Այնուհետեւ վերնախավի միջոցով այն պետք է տարածվի հասարակության մյուս շերտերի շրջանակներում: Սա այն տրամաբանական ճանապարհն է, որի միջոցով դարեր շարունակ ծագել եւ տարածվել են գրեթե բոլոր գաղափարախոսությունները: Որքանո՞վ են այսօր ժողովրդավարությունը, իրավական պետությունը, օրենքները եւ նմանատիպ արժեքները արմատացած մեր պետության վերնախավի եւ հասարակության մյուս հատվածի մեջ: Արդյոք մենք ցանկանո՞ւմ ենք ապրել նմանատիպ արժեքներ կրող պետության մեջ եւ պատրաստ ենք:

Որքանո՞վ է Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն: Ո՞րն է հայկական ինքնիշխանության երաշխիքը: Ինքնիշխանությունը, ամեն ինչից զատ, նախ հոգեբանական երեւույթ է: Ինքնիշխան է այն պետությունը, որտեղ ապրում են այդպիսի գիտակցություն կրող մարդիկ:

1990-ական թվականներին խորհրդային կարգախսի առաջին ալիքի ժամանակ մի ուշագրավ կենցաղային դրվագ անընդհատ զարմացնում էր ինձ: Ավագ սերնդի մի մասը ժամացույցի սլաքները ճշգրտում էր ռուսական լուրերի ժամացույցով: Մոսկվայի ժամը ավելի հեղինակավոր էր, քան Երեւանինը: Օտարի իշխանության գերագնահատումը մեր գիտակցության մեջ նվաստացնում է սեփական իշխանությունը: Եթե օտարի ժամը հեղինակավոր է մեր ժամից, օտարի օրենքները՝ մեր օրենքներից, օտարի նախագահը՝ մեր նախագահից, ապա դա ուղղակիորեն ազդում է մեր ինքնագնահատականի վրա: Նմանատիպ ածանցվածությունը տարածվում է կյանքի գրեթե բոլոր ոլորտների վրա: Սա է պատճառներից մեկը, որ մինչ այժմ մենք սովոր ենք մեր պետության գործերի մասին դատողություններ կատարել որեւէ գերտերության հնարավոր միջամտության դիտանկյունից: Պետականության բացակայության պայմաններում հայ ժողովուրդը մշտապես սեփական փոքրիկ դերում տեսել է օտարներին: Այսպիսի մտածողությունը արմատացած է նաեւ ներկա սերունդների գիտակցության մեջ: Սա մեր ինքնիշխանության ամենամեծ թշնամին է:

Սակայն եթե խոսում ենք պետության ինքնիշխանության մասին, ապա այն պետք է դիտարկել երկկողմանի հարթության մեջ, որտեղ հավասարաչափ բաժնեմաս ունեն ե՛ւ իշխողները, ե՛ւ իշխվողները: Հակառակ դեպքում, չի կարող խոսք լինել պետության ինքնիշխանության մասին՝ իբրեւ ընդհանրական գաղափար: Ժամանակակից ժողովրդավարական հասարակություններին բնորոշ գծերից մեկը հասարակության բոլոր խավերի միջեւ ճկուն եւ կարգավորված հարաբերություններն են, որոնք միսված են ապահովելու համընդհանուր բարեկեցությունն եւ համընդհանուր կարգ: Եթե հասարակությունը օտարվում է իշխանություններից տնտեսապես, գաղափարապես, ապա այն կարող է օտարվել իշխանություններից ընդհանրապես բոլոր հարթություններում: Այսպիսի իրավիճակը կարող է բերել նրան, որ ինչ-որ պահի հասարակությունն ամբողջությամբ կամ նրա տարբեր հատվածները առաձին-առանձին սկսում են չզգալ իշխանության կարիքը, իսկ ավելի կոնկրետ՝ այդ պահին գործող իշխանության կարիքը: Այս դեպքում հասարակությունը փնտրում է մեկ այլ իշխանություն, որը կպատասխանի իր հիմնական պահանջները: Նմանատիպ՝ առավել հեղինակավոր իշխանության դերում կարող են դիտվել ինչպես տվյալ հասարակության մյուս բեւեռները, այնպես էլ այլ պետություններ եւ ուժեր: Մեր պատմության անկախ շրջափուլերում նմանատիպ ախտեր, ցավոք, բազմաթիվ են եղել: Արդյունքը կորցրել է իշխանությունը առանձին ֆեոդալական տների նկատմամբ, կորցրել է վստահությունը ժողովրդի աչքում: Ժողովուրդը հաճախ հովանավորություն է փնտրել առանձին իշխանների կողմից: Իշխանության եւ ժողովրդի, իշխանության եւ վերնախավի մի հատվածի միջեւ հարաբերությունների խզումը հանգեցրել է համընդհանուր կարգի խարխլմանը, որն ինքնիշխանության կարեւորագույն տարրերից է: Թե՛ ժողովուրդը եւ թե՛ վերնախավի մի մասը աջակցություն են փնտրել օտար պետությունների եւ իշխանությունների կողմից: Հայկական անկախ պետություններում գրեթե միշտ ինքնիշխանությունը նախ եւ առաջ կախված է եղել երկրի ներքին կայունությունից եւ ապա՝ արտաքին գործոններից: Զինված ուժերը, օտար երկրների հետ հարաբերությունները, ընդամենը ածանցվում են պետության ներքին կայունությունից՝ հանդիսանալով ինքնիշխանության կարեւոր ատրիբուտներ: Սակայն եթե պետության ներսում չկա փոխադարձ պատասխանատվություն իշխանության եւ հասարակության միջեւ, ապա խախտվում են նրանց միջեւ դերային հարաբերությունները: Իշխանություններն օտարվում են հասարակությունից, չեն տիրապետում նրանց հիմնական պահանջմունքներին, կորցնում են հանրության ներսում ընթացող խմորումների նկատմամբ վերահսկողությունը: Հաճախ իշխանական ինքնաբավ այս շրջանակի մեջ ընդգրկվում են թե՛ իշխանական վերնախավը, թե՛ ընդդիմությունը: Հասարակությունն իր հերթին դառնում է առավել խոցելի տարբեր տեսակի ուժերի համար: Եթե ժամանակին այդ ուժերի դերում օտար պետություններն էին, ապա այժմ այդ դերը սանձնել են նույն այդ պետությունների կողմից հովանավորվող տարատեսակ ֆինանսական կառույցներ, աղանդավորական կազմակերպություններ եւ այլն: Այժմ, խախտվում է ոչ միայն պետության քաղաքական ինքնիշխանությունը, այլեւ մշակութային, կրոնական, տնտեսական, գաղափարախոսական ինքնիշխանությունը: Եթե նախկինում ինքնիշխանության վտանգները գալիս էին դրսի անմիջական ազդեցությունից, ապա այժմ այդ ազդեցությունը փոխակերպվել է ներքին ազդեցության: Օրինակ, կրոնական տեսանկյունից, խորհրդային ժամանակաշրջանի համեմատ, ներկայումս Հայ առաքելական եկեղեցու դիրքերը բավականին ամրապնդվել են: Հասարակության մեջ այդ փոփոխությունն ակնհայտ է: Սակայն տասնյակ աղանդավորական կազմակերպություններ իրենց կողմն են գրավում եկեղեցու բազմահազար հետեւորդներին: Եվ վիճարկվում է մեր կրոնական ինքնիշխանությունը: Ներկայիս մշակութային բազմազանությունն ու դրա անմիջական ազդեցությունը հայ իրականության վրա ավելի են լղոզում սեփականի եւ օտարի սահմանները: Նվազում է սեփականի ճանաչողության եւ գիտակցման աստիճանը: Հետեւաբար՝ խարխլվում է մշակութային ինքնիշխանությունը: Երեւույթների նման ընթացքը բերում է նրան, որ մոտենում են իշխանության եւ անիշխանության սահմանները, իսկ պետության ինքնիշխանության մասին խոսելը դառնում է ավելորդ:

ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ

Թուրք լրագրողները՝ Հայաստանի մասին

Հունիսի վերջերին նրանք Երևան էին ժամանել «Հրանտ Դինք» հիմնադրամի նախաձեռնությամբ

Հունիսի վերջերին «Հայաստան-Թուրքիա լրագրողների երկխոսություն» ծրագրի շրջանակներում Երևան էին այցելել յոթ թուրք լրագրողներ: «Հրանտ Դինք» հիմնադրամի նախաձեռնությամբ իրականացված այցի ընթացքում թուրք լրագրողները հանդիպել էին ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հանձնաժողովի նախագահ Արսակ Դավթյանի, ՀՅԴ բյուրոյի Հայ դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանի, Հայ-թուրք գործարար միության համանախագահ Արսեն Ղազարյանի, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանի, «Սիվիլիթաս» հիմնադրամի տնօրեն Սալբի Ղազարյանի, ինչպես նաեւ **«Ազգի»** գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանի հետ:

Ի դեպ, «**Ազգի**» խմբագրությունում թուրք լրագրողներին եւ նրանց հարցերին էր պատասխանել մեր աշխատակից Արա Մարտիրոսյանը: Ըստ երեւույթին նրա պատասխանները առանձնապես չեն գոհացրել, որ հանդիպումը լռության է մատնվել: **«Ազգի»** խմբագրի հետ հանդիպմանը, հավանաբար նույն մոտիվներով, նրանք ընդամենը 3 տող են հասկացրել: Ամենայն հավանականությամբ թուրք լրագրողների ուշադրությունը սեւեռված է եղել ՀՅԴ բյուրոյի անդամ Կիրո Մանոյանի վրա, որ հուլիսի 6-ին «Սթար» թերթը նրանց երեւանյան հանդիպումներին նվիրված հոդվածը վերնագրել է հետեւյալ կերպ. «Դաշնակցականները 100-ամյա զայրույթին վերջ տալու համար երկխոսություն են պահանջում»:

Ըստ «Սթարի», ԱԺ հանձնաժողովի նախագահ Դավթյանը թուրք լրագրողներին ասել է. «Թեեւ ֆուտբոլային դիվանագիտությամբ դուռը չի բացվել, բայց կիսաբաց է արվել: Երկկողմ հարաբերությունների նորմալացման համար դա ստեղծել է բարենպաստ մթնոլորտ: Կան շատ բարդ խնդիրներ, որոնց մասին պետք է միմյանց հետ խոսել: Ադրբեջանն ու Թուրքիան տարբեր երկրներ են: Թուրքիան ունի պատկառելի անցյալ: Մեկնարկը սխալ է տրված: Առանց Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման չեն կարող զարգանալ Ադրբեջանի հետ Հայաստանի հարաբերությունները: Յուրաքանչյուրը պետք է քայլ կատարի, որպեսզի հնարավոր լինի փոխզիջումներով լուծել հակամարտությունը: Ղարաբաղը պետք է լինի ինքնիշխան, Հայաստանի հետ ունենա ընդհանուր սահման եւ երաշխավորվի բնակիչների անվտանգությունը»:

ՀՅԴ բյուրոյի Հայ դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու Մանոյանը, ընդգծելով Հայաստան-Թուրքիա հարաբերություններն առանց նախապայմանների կառուցելու անհրաժեշտությունը, նշել է. «Թող երկու երկրներն էլ հանգեն դիվանագիտական հարաբերությունների հաստատման որոշմանն ու սահմանը բացվի: Իսկ մնացած հարցերը թող կարգավորվեն միջազգային իրավունքի նորմերին համապատասխան»:

Հայ-թուրք գործարար միության նախագահ Ղազարյանը արտահայտվել է ընթացիկ ամսում շուրջ 30 թուրքերի նախատեսվող կոնֆերանսին մասնակցելու համար Հայաստան հրավիրելու իր մտադրության մասին: Իսկ «Սիվիլիթաս» հիմնադրամի տնօրեն Սալբի Ղազարյանը ասել է, որ իր ընտանիքը Սասունից տեղափոխվել է Սեբաստիայի Գյուրուն գավառ, ապա Կեսարիա, որտեղից էլ՝ Հալեպ: 1964-ին հաստատվել է ԱՄՆ-ում, այսպիսով, ինքը ծնվել է սփյուռքահայի ընտանիքում: Այնուհետեւ նա նշել է, որ Թուրքիան սխալ է մեկնաբանում Սփյուռքի հետ Հայաստանի հարաբերությունները, սփյուռքահայերի տրամադրած ֆինանսական օգնությունը մայր հայրենիքին սահմանափակ է:

Ցեղասպանության-թանգարան ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը թուրք լրագրողներին պատմել է թանգարանի ընդարձակման հեռանկարի մասին, նշելով, որ այնտեղ հատուկ բաժիններ են բացվելու ականատեսների վկայությունների, ինչպես նաեւ «Թալեաթ փաշայի թղթապանակը» գրքի համար:

Հ. ՉԱՔԲՅԱՆ

«Էկոնոմիստ» հերթական «խայթոցը» վարչապետ Էրդողանին

Թուրքիայի ազգային մեծ ժողովի հունիսի 12-ի ընտրություններից առաջ հունիսի 4-ի համարում անգլիական «Էկոնոմիստ» հանդեսը նախընտրական քարոզարշավը լուսաբանելիս «հանուն թուրքական պետության ապագայի Ժողովրդահանրապետական կուսակցության օգտին» քվեարկելու կոչ էր արել թուրք ընտրողներին: Թեեւ այդ կոչը նպատակին չծառայեց, սակայն դրա իրական հասցեատերերը ոչ թե ընտրողներն էին, այլ աշխարհի ֆինանսական ազդեցիկ շրջանակները, որոնք մեծապես ուղղորդում են նաեւ միջազգային քաղաքականության ընթացքը:

Օրերս «Էկոնոմիստը»՝ ի դեմս խմբագիր **Ջոն Փիթի**, «Դունիա բուլթենի» կայքէջի վկայությամբ, ուղղակի հակադրվել է վարչապետ Էրդողանին: Լոնդոնի «Չեթըմ հաուզ» կենտրոնում մասնակցելով «Հետընտրական Թուրքիա. «Արդարություն ու բարգավաճում» կուսակցության կառավարությանն սպասող դժվարությունները» թեմայով սիմպոզիումին մասնակցելիս խմբագիր Փիթն ասել էր, որ Թուրքիայի առաջնահերթ խնդիրը ժողովրդավարական, ժամանակակից նոր սահմանադրության ընդունումն է: Ապա նա ավելացրել է. «Նախագահական այն համակարգը, որի մասին երազում է վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, Թուրքիայի նման երկրների համար վտանգավոր հետեւանքներ կունենա»:

Ըստ երեւույթին վտանգավոր ասելով «Էկոնոմիստի» խմբագիրը նկատի ունի Աբդուլլահ Գյուլից հետո նախագահի պաշտոնում վարչապետ Էրդողանի ընտրության հավանականությունը: Եթե դա այդպես է, ապա պետք է ենթադրել, որ վտանգավորության պարագայում անգլիական հանդեսի խնդիրը ոչ թե Թուրքիան է, այլ Թուրքիայի նախագահ ընտրված Էրդողանը:

Հ. Չ.

Ճապոնիան կսուզի իր բոլոր ատոմակայանները

Ճապոնիայի կառավարությունը ապահովության ստուգումներ կանցկացնի երկրի բոլոր ատոմակայաններում: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը, վկայակոչելով տեղական լրատվամիջոցներ:

Ճապոնական բոլոր ատոմակայանների ապահովության ստուգումներ անցկացնելու որոշումը հրապարակել է էկոնոմիկայի, առեւտրի եւ արդյունաբերության նախարար Բանրի Կայեդան: Նա համաքաղաքացիներին հավաստիացրել է, որ ստուգումները որեւէ ձեւով չեն անդրադառնա ամառային էլեկտրամատակարարումների վրա:

2011-ի մարտին սաստիկ երկրաշարժի եւ ցունամիի հետեւանքով «Ֆուկուշիմա-1» ատոմակայանում տեղի ունեցավ խոշոր վթար՝ շարից դուրս եկան ռեակտորների հովացման ինքնաշխատ համակարգերը: Կայանում եւ դրա շուրջը զգալիորեն ուժեղացավ ճառագայթային ֆոնը: ԱԷԿ-ի շրջակա տարածքներից մինչեւ 20 կմ հեռավորության վրա բնակվող մարդիկ տարհանվեցին: Պատասխանվում է, որ վթարի հետեւանքները հնարավոր կլինի վերացնել միայն 2012-ի սկզբներին:

Ճապոնիայի տարածքում կա ընդամենը 54 ռեակտոր, բայց ներկայումս գործում է միայն 19: Մարտյան աղետից հետո ճապոնական ատոմակայանների ղեկավարությունը որոշեց չաշխատեցնել այն ռեակտորները, որոնք ինչ-ինչ պատճառներով կանգնեցրել էին «Ֆուկուշիմա-1»-ի վթարի ժամանակ:

«ՀՈՐՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

Մարդու իրավունքների ազդեցիկ պաշտպանը

«Բոստոնում 88 տարեկանում վերջերս իր մահկանացուն կնքած Ելենա Բոնները՝ ակադեմիկոս Անդրեյ Սախարովի այրին, 1970-ական թվականներին եղել էր Մոսկվայի Հելսինկյան խմբի հիմնադիրներից մեկը: Անխնա պայքար մղելով ճնշումների եւ բռնությունների դեմ՝ այդ խումբը շուտով ամենաազդեցիկը դարձավ մարդու իրավունքների պաշտպանության համընդհանուր շարժման ոլորտում», նշված է խմբագրությանը հասցեագրված Կանադայում գործող «Զորյան ինստիտուտի» հաղորդագրության մեջ:

Իր ամբողջ կյանքի ընթացքում Բոնները բազմաբնույթ հարցերի վերաբերյալ էր բարձրաձայնել, այդ թվում նաեւ Ղարաբաղում ադրբեջանցիների կողմից կատարված մարդու իրավունքների ոտնձգությունների դեմ, սկզբից ելեթ պաշտպանելով հայերի ազատագրական շարժումը այնտեղ, ասված է հաղորդագրության մեջ, որտեղ հիշատակություն կա 1990-ին «Զորյան ինստիտուտի» եւ Հարվարդի իրավաբանական ֆակուլտետի հովանավորությամբ կազմակերպված հրապարակային դասախոսության մասին: Այդ դասախոսության ժամանակ Ելենա Բոնները խոսել է «Ազգությունները Խորհրդային Միությունում: Հնարավոր լուծումներ վերամշակված սահմանադրության շրջանակներում» թեմայով:

Նա նաեւ բավական սուր նախաբան է գրել «Սումգայիթի ողբերգությունը: Խորհրդային Ադրբեջանում կոտորածներն ընդդեմ հայերի» գրքի համար՝ հրատարակված «Զորյան ինստիտուտի» կողմից: «Սումգայիթը ցնցեց հայերին իր գազանությամբ եւ ցինիզմով: Պատմությունն անկասկած իր վճիռը կկայացնի այդ ցեղասպանության վերաբերյալ: Բայց դժբախտաբար պատմության դատաստանները միշտ էլ ուշ են տեղ հասնում՝ առաջ բերելով հետագա դժբախտություններ: Ղարաբաղում թույլ տված սխալներից սկսելով, Սումգայիթի իրադարձությունները, որոնք դեռ պաշտոնապես չեն դատապարտվել, ողբերգությունների մի ամբողջ շարք բերեցին մեր երկրին (Խորհրդային Միությանը), որոնք դեռ երկար ժամանակ կպահանջեն հասկանալի դառնալու համար», գրել էր նա:

Ելենան ավագ դուստրն էր հայազգի բոլշեւիկ հեղափոխական Գեւորգ Ալիխանյանի (որը մի ժամանակ կուսակցության ղեկավար էր Հայաստանում) եւ հրեա Ռուաթ Բոնների:

«Հաշվի առնելով, որ կես հայ եւ կես հրեա եմ, գուցե ես չպետք է գրեի այս նախաբանը: Ավելի ճիշտ կլիներ, գուցե, եթե գրեր, ասենք, մի ազգերի կին, ով օգնել էր փրկելու մի հայ ընտանիքի: Նրա խոսքերը տեղ են գտել գրքում. «Տեսեք, թե ինչ է կատարվում դրսում: Երեխաս տեսնում է այդ բոլորը եւ վաղը նա նույն բաներն է անելու»: Սա նախազգուշացում է՝ ուղղված մեզ բոլորիս: Եթե մեզ չհաջողվի ամեն մի պետություն, մեծ թե փոքր, դարձնել պետություն իր ժողովրդի համար, ապա մեր զավակներն ու թոռները անմարդկային, գազանանման ամբոխների են վերածվելու», գրել էր Ելենա Բոնները:

«Նրա պատգամները շարունակում են ոգեւորել մարդկանց ամբողջ աշխարհով մեկ՝ որպես մարդու իրավունքների անխոնջ պաշտպանի ազդեցիկ հորդորներ», ասված է հաղորդագրության եզրակացության մեջ:

Հ. Ծ.

ԵՄ-ը արգելեց որոշ սերմերի եւ լոբազգիների ներմուծումը Եգիպտոսից

Եվրոհանձնաժողովը ժամանակավորապես արգելել է Եգիպտոսից որոշ սերմերի եւ լոբազգիների ներմուծումը, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Մինչեւ հոկտեմբերի 31-ը գործող արգելքը կապված է այն կասկածների հետ, թե եգիպտական գյուղմթերքներում առկա է սովորական աղիքային ցուտիկի (E-coli) ախտածին նախատիպը, որով վարակվելը հանգեցնում է ներքին արյունահոսության եւ մի շարք այլ լուրջ ախտանիշների:

Գերմանիայում եւ որոշ այլ երկրներում այդ մանրէով զանգվածաբար վարակվելու դեպքերի հետազոտության արդյունքների համաձայն, մանրէն կարող էր Եվրոպա հասած լինել Եգիպտոսից:

2009-ից հետո Եգիպտոսից ԵՄ երկրների ձեռք բերած կասկածելի սերմացուն ու լոբազգիները ենթակա են առգրավման, ստուգման ու ոչնչացման:

Ավելի վաղ հաղորդվել էր, որ Գերմանիայում եւ այլ երկրներում վտանգավոր մանրէն 50 մարդու կյանք է խլել, հազարավոր մարդիկ հայտնվել են հիվանդանոցներում:

Վարակի աղբյուրը երկար ժամանակ մնում էր անորոշ: Բանջարեղենի սպառումը նվազել էր, եւ եվրոպացի բանջարաբույծները բազմամիլիոնանոց վնասներ էին կրում: Բացի դրանից, որոշ երկրներ (մասնավորապես Ռուսաստանը) եվրոպական բանջարեղենի ներմուծման ժամանակավոր արգելք էին սահմանել, որը ի վերջո վերացվեց:

Հուլիսին ՄԱԿ-ը կքննարկի Պաղեստինի անդամակցության հնարավորության հարցը

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հուլիսին քննարկելու է Պաղեստինի ՄԱԿ ընդունվելու հնարավորության հարցը: Քննարկումը տեղի կունենա Արաբական պետությունների լիգայի պահանջով: Նախատեսված է քննարկումն անցկացնել հուլիսի 26-ին:

Տվյալ նախագծի շրջանակներում ՄԱԿ-ի անդամ կդառնա ինչպես Այսրհորդանանը, այնպես էլ Գազայի հատվածը, իսկ որպես Պաղեստինի մայրաքաղաք նշվում է Արեւելյան Երուսաղեմը:

Բրիտանական «Թելեգրաֆ» թերթի կայքը տեղեկացնում է այս ամենի մասին, վկայակոչելով ՄԱԿ-ի ԱԽ հերթապահ նախագահ, Գերմանիայի դեսպան Պետեր Վիսսիգի հայտարարությունը:

Հուլիսի 11-ին Վաշինգտոնում տվյալ հարցը նախապես քննարկվելու է Մերձավորարեւելյան քառյակի (ԱՄՆ- ՌԴ, ԵՄ, ՄԱԿ) նիստում:

Պ.Ք.

ԱՆՅՈՒԴԱՐՁ

Լեւոն Լաճիկյանի անհատական հինգերորդ ցուցահանդեսը

Ամառվա այս տաղն անգամ չխանգարեց, որ ԿԱԶԱ ժվեյցարական մարդասիրական հիմնադրամի «Էսդաս» երիտասարդական կենտրոնի (Նալբանդյան 29) սրահները հուլիսի 2-ի շաբաթ օրը լեցուն լինեին տեղացի դարման-դարմանուհիներով եւ արտասահմանից ժամանած զբոսաշրջիկներով: Այս կենտրոնում դարբերաբար կազմակերպվող ցուցահանդեսների, ֆոնարկում-բանավեճերի եւ գրական երեկոների միջոցով հետեւողական աշխատանք է տարվում մեր երիտասարդության գեղագիտական դաստիարակության ուղղությամբ՝ ընձեռելով շարունակական կրթության հնարավորություն:

«Մեծ ուրախությամբ արձագանքեցի «Էսդաս»-ում ցուցահանդես բացելու առաջարկին», «**Ազգ**»-ի հետ իր զրույցում նշեց Լեւոն Լաճիկյանը: Բանն այն է, որ մերօրյա երիտասարդների մեծ մասն աճում է կեղծ արժեքների մթնոլորտում եւ այդ դաստաճառով լուրջ արվեստի դահանջ չի ներկայացնում: Ժամանակն է այս հարցում կտրուկ շրջադարձի»:

Երկու սրահներում ցուցադրվող գրաֆիկական նուրբ աշխատանքներում թե՛ եվրոդական քաղաքներն են (Փարիզ, Մարսել, Վենետիկ, Դրահա եւ այլն), թե՛ Գյումրին, Գորիսն ու Մեղրին: Ուշագրավն այն է, որ ցուցադրվելով կողք-կողքի՝ դրանք կարծես մի կարեւոր միտք են հուշում. մարդու ձեռակերտած գեղեցիկը գեղեցիկ է ամենուր: Պարզապես այն տեսնել ու գնահատել է պետք:

Իրոք, Լեւոն Լաճիկյանի քաղաքային բնապատկերներն ասես սիրո հորդոր լինեն առ մեզ շրջապատող գեղակառույցներն ու շրջակա միջավայրն ընդհանրապես, որտեղ մարդը ոչ միայն ծնվում ու հասակ է առնում, այլեւ կազմավորվում որպես մտածող էակ եւ ապագա քաղաքացի: Հարցին, թե ինչո՞ւ գծանկարները «բնակեցված չեն» մարդկանցով, հեղինակն այսպես պատասխանեց. «Արարչի ներկայությունը եւս տեսանելի չէ: Նրա գոյության մասին, սակայն, խոսում են կենդանիներն ու թռչունները, իր իսկ պատկերով ստեղծված մարդ-արարածը: Իրողությունը նույնն է շենքերի պարագայում. դրանք անուղղակի խոսում են իրենց հրաշակերտած մարդկանց ու անանուն վարպետների մասին: Շենքը ինքը մարդն է»:

Ներկաների համար Լեւոն Լաճիկյանը հանդես եկավ նաեւ դասախոսությամբ՝ «Հայ ուղեգրության պատմության համառոտ ակնարկ» թեմայով: Կարեւորելով գրական այս ժանրի գեղագիտական առանձնահատկությունները՝ բանախոսն անդրադարձավ հայ միջնադարյան հեղինակներին (Մարտիրոս եպս. Երզնկացի, Սարգիս աբեղա, Սիմեոն Լեհացի), ապա խոսեց մերօրյա ուղեգիրների (Սիլվա Կապուտիկյան, Վարդգես Պետրոսյան, Արտաշես Քալանթարյան, Մարգո Ղուկասյան, Զորի Բալայան, Յարութիւն վրդ. Պզտիկեան եւ ուրիշներ) մասին:

ՎԵՐՈՆԻԿԱ ՄԿՐՏՉՅԱՆ

Կայացավ «Գիտակցության ստերեոտիպեր» գրքի շնորհանդեսը

Հայաստանի գրողների միությունում օրերս կայացավ **Թովմաս քահանա (Վահան) Անդրեասյանի** հինգերորդ՝ «Գիտակցության ստերեոտիպեր» գրքի շնորհանդեսը: Վահան Անդրեասյանը մինչեւ Հոգեւոր ճեմարանի քահանայից լսարանն ավարտելն ու ձեռնադրվելը, ավարտել է Տ. Չուխաջյանի անվ. երաժշտական դպրոցի ջութակի բաժինը, այնուհետեւ ուսանել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի կուլտուրայի ֆակուլտետի ռեժիսորական կուրսերը: Բուռն սերը երաժշտության նկատմամբ հնարավորություն է ստեղծել ուսումնասիրելու երաժշտական կոմպոզիցիա եւ հարմոնիա, տաղաչափություն: Վահանն աշխատել է թատրոններում, հեռուստատեսությունում որպես ռեժիսոր, դերասան, կոնցերտմեյստեր, երաժիշտ, գրել երկու տասնյակից ավելի երգեր, որոնք այսօր կատարվում են: Նրա երաժշտությամբ բեմադրվել են հեռուստառադիոներկայացումներ: Չորս բանաստեղծական գրքի հեղինակ է Վահան Անդրեասյանը եւ 2003-ից ՀԳ միության անդամ:

Շնորհանդեսը բացեց եւ Թովմաս քահանա Անդրեասյանի գրական գործունեությանն անդրադարձավ ՀԳՄ նախագահ **Լեւոն Անանյանը**: Այնուհետեւ «Գիտակցության ստերեոտիպեր» գրքի մասին գովեստի խոսքեր հնչեցրին **Արեւշատ Ավագյանը**, **Հակոբ Մովսեսը** եւ ուրիշներ:

«**Ազգ**»-ի հարցին՝ ինչպե՞ս որոշեց նման աշխատություն ստեղծել, Թովմաս քահանա Անդրեասյանն ասաց. «Երկար տարիներ մտորում էի նման ստերեոտիպերի մասին գիրք գրել: Երբ ծառայում էի Ադիգեայի եկեղեցում, այդ երեք տարիների ընթացքում, իմ ազատ ժամանակը տրամադրել եմ այս գրքում զետեղված նյութերի մանրամասն ուսումնասիրությանը: Իսկ հետո մի շնչով գրեցի ու ահա այսօր ընթերցողի դատին եմ հանձնում այն»: Ինչպես «**Ազգ**»-ին տեղեկացրեց Թովմաս քահանան, պատրաստվում է հրատարակել բանաստեղծություններ՝ նոր գիրքը եւ կիթառային պիեսներ՝ ժողովածուն: «Գիտակցության ստերեոտիպեր» գրքում հեղինակը մանրամասն վերլուծել է մշակույթի բոլոր ճյուղերը, տվել իր տեսակետը: Իսկ այն հարցադրումը, որն արել է հեղինակը, կարելի է համարել եզակի՝ դա գրականության եւ քրիստոնեության, քրիստոնեական իդեալների, քրիստոնեական բարոյականության արծարծման հարցն է: Գրքում հեստքրքրական մեկնաբանություն է տրվել, թե ժամանակակից մշակույթը ինչ կապ ունի հոգեւոր այն արժեքների հետ, որոնք հազարամյակներ շարունակ մեր մեջ «ներարկել» է քրիստոնեությունը եւ ինչքանով ենք մենք արվեստի, մշակույթի ու նաեւ պոեզիայի մեջ քրիստոնյա, եւ ինչքանով ենք քրիստոնեության բարոյականությունը կրողներ: Գիրքը վերջին 2000 տարվա ընթացքում հասարակական եւ հոգեւոր կյանքում, մշակույթում ձեւավորված գիտակցության ստերեոտիպերի մասին է: Այն փորձ է ի մի բերելու եւ համակարգելու մարդկության պատմության ընթացքում տեղի ունեցած շատ երեւույթներ: Ճանաչողական բնույթի այս գիրքը շատ կհետաքրքրի ընթերցողին:

ՍԱԲԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Հնչող, շնչող, ճախրող գույներ

Արթուր Օշականցու ցուցահանդեսը Վանաձորում

Հունիսի 18-ին Լոռու մարզկենտրոնում կազմակերպվել էր աչք եւ հոգի շոյող միջոցառում. բացվեց լոնդոնաբնակ նկարիչ Արթուր Օշականցու ցուցահանդեսը (գործելու է մինչեւ հուլիսի 9-ը): Մշակութային այս գեղեցիկ հանդիսության առթիվ շնորհավորելով վանաձորցիներին եւ հյուրերին՝ Հայկական հանրագիտարանի պատասխանատու քարտուղար, «Վեմ» ռադիոկայանի (101,6) լրագրող-մեկնաբան Հասմիկ Գուլակյանը ցանկության պես ասաց՝ երանի մեր երկրում հատկապես հաճախանան բարձր արվեստի եւ ազգային հաղթանակների տոնակատարությունները:

Ստորեւ ներկայացնում ենք նրա ելույթը:

Կարծում եմ՝ մեծ համարձակություն է պահանջվում, մասնագետ չլինելով, հրապարակավ խոսել մի արվեստագետի մասին, որի ստեղծած արժեքներին լավ ծանոթ չես, իսկ ծանոթանալու համար ժամանակ է հարկավոր: Իսկ եթե ասենք, որ նրա ստեղծագործությունը բավական բարդ է, եւ հասկանալու համար պետք է լավ ճանաչես հեղինակին, դարձյալ քիչ բան ասած կլինեմ, որովհետեւ դարձյալ հղելու եմ ժամանակը: Այսինքն՝ բարդ երեւույթն ընկալելու եւ գնահատելու համար ժամանակ է հարկավոր, այլապես չես կարողանա այն ինչ-որ չափով մարսել:

Սակայն մեր հայրենակիցը՝ Արթուր Օշականցին, մեզ այդքան ժամանակ չի տալիս, որովհետեւ ինքը դիտում այդ կտավները եւ ինչ տեսանկյունից: Չի բացառվում, որ տարբեր պահերի փոխվեն նախկին զգացողություններդ՝ ավելի հարուստացնելով նախորդ տպավորություններդ կամ բացեն նոր շերտեր:

Արթուր Օշականցու գույների համանվագն սիրողում է մտածել լույսի ու լուսավորի մասին, վեհացնում է, ազնվացնում, վարակում արարման ցանկությամբ: Ես, որ գույներ շատ եմ սիրում, կարեւորում եմ նրա վրձներանգները՝ անկախ այն բանից, թե ինչ է նկարել նա կամ երբ է նկարել: Հոգիդ խաղաղվում է նրա գույների համանվագին առնչվելիս: Նրա կտավներից մեղեդի է հոսում: Սա, կրկնում եմ, իմ՝ ոչ մասնագետիս կարծիքով ու զգացողությամբ:

Այստեղ ցուցադրված են նաեւ նկարչի վաղ շրջանի գործերից: Եվ տեսնում ենք, թե ինչպես է նա 1980-ական թվականներին արտահայտել իր բողոքը եւ անհանդուրժողականությունը սովետական կարգերի ու բարքերի դեմ. խոսուն ու հստակ են նրա գույների համադրությունն ու հակադրությունը: Այն շրջանում նրա միտքն արդեն իսկ առաջ էր անցել ժամանակից. դա զգացվում է կտավներին փոխանցած արվեստագետի զգացումներից, հոգեւոր լիցքերից, ապրումների խորությունից, զգացողությունների ներդաշնակության փնտրտուքներից, լուսագունային անցումներից: Բանաստեղծական են անգամ այդ գործերի վերնագրերը, երբ թեման քնարական չէ կամ հեռու է այդպիսին լինելուց:

Նրա կտավներն արտաքուստ բովանդակություն չունեն, բայց հույզը միշտ ներկա է, որովհետեւ միշտ ներկա է բանաստեղծությունը: Ըստ իս՝ Արթուր Օշականցի նկարիչը բանաստեղծ է, որովհետեւ բանաստեղծական են նաեւ նրա նկարների վերնագրերը: Պատկերացնո՞ւմ եք՝ մարդը Մեծ եղեռնին նվիրված ցուցահանդես է բացում «Թռչած հոգիներ» խորագրով: Թվարկեմ մի քանի գործերի վերնագրեր այդ ցուցահանդեսից՝ «Գարուն ա, ձյուն ա արել», «Դե եկ վարդաղես ու մի խենթանա», «Խախտված ներդաշնակություն», «Վարդագույն հոգեւարք» եւ այլն: Այլ վերնագրերից՝ «Լույսի տոն», «Լույսի հանգրվան», «Խորհրդավոր հոգեհոգ», «Լուսավոր հոգեհոգ», «Վերհառնում», «Դրախտի թռչունը», «Բակն արեւով լցվել է», «Թիթեռների տունը», «Դեղին պար» եւ այլն:

Չնայած Արթուր Օշականցին սիրում է իրեն հեռու համարել բոլոր տեսակի «իզմ»-երից ու «իստ»-երից, սակայն Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» թանգարանը 2003 թվականին նրան հռչակել է «աբստրակտ նատուրալիզմի» հիմնադիր՝ արվեստի պատմության մեջ: Պարզվում է՝ բազմաթիվ «իզմ»-երով ու «իստ»-երով հարուստ համաշխարհային մշակույթի պատմության մեջ նոր «իզմ»-ի պակաս կար, եւ այս անգամ այն պետք է լրացներ մեր հայրենակիցը: Իսկ թե որքանով են համադրելի «աբստրակտ» եւ «նատուրալիզմ» հասկացությունները՝ որպես արվեստի այդ ճյուղին բնորոշ արտահայտություններ, թող ասեն ավելի գիտակները:

Արթուր Օշականցին սկզբունքային եւ գաղափարական մտավորականի է, հստակ հավատամք ունեցող արվեստագետ, որը միշտ եւ ամենուրեք հավատում ու ապավինում է նախ եւ առաջ հայրենի բնությանը. նման տպավորություն եմ ստացել վերջին մեկ ամսվա ընթացքում եւ՛ մեր զրույցների, եւ՛ նրա որոշ գործերին ծանոթանալու ընթացքում: Սա հասկանալուց հետո ինքնըստինքյան պարզվում ես նաեւ, թե որտեղից են սերում նրա հավատավոր արվեստի ակունքները՝ այդքան զուլալ, բարի, լուսավոր, ազգային, այդքան համամարդկային:

Արթուր Օշականցու արվեստի մեջ, ինչպես արդեն ասացի, շատ չեմ խորացել եւ չեմ էլ կարող ասել, թե ինչ կտա ինձ նման փորձը, բայց որ նրա ասելիքը չեմ շփոթի այլոց հետ, հասկացա արվեստագետի մի շարք գործեր դիտելուց հետո: Տավոր, նկարչի վերջին շրջանի աշխատանքներն ինձ ծանոթ չեն, բայց կարծում եմ, որ դրանք գույների շահանդես պետք է լինեն, որովհետեւ ստեղծվել են ավելի հասուն տարիքում՝ որպես կյանքի փորձ ունեցող եւ իմաստնության ուղին բռնած մտավորականի հստակ համոզմունքներով ձեւավորված ասելիք:

Վերջերս մի առիթով ասել եմ, այսօր, որպես բարի ցանկություն, ուզում եմ կրկնել՝ Արթուր Օշականցու գործերի վերջնահանգրվանն այստեղ՝ Մայր հայրենիքում պետք է լինի: Կարծում եմ՝ նման մյուս արվեստագետների եւ մտավորականների տեղը միայն ու միայն հայրենի հարկի տակ պետք է լինի եւ առհավետ:

Մեզ մարտնչող մտավորականարվեստագետներ են պետք՝ դիմակայելու համար գլոբալացվող այս աշխարհի ամենակուլ մարտահրավերներին:

ՀԱՍՄԻԿ ԳՈՒԼԱԿՅԱՆ

Հայաստանը կներգրավվի հանդբոլի միջազգային նոր լիգայում

Հանդբոլի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Սարգիս Գրիգորյանը մասնակցել է Մոսկվայում ԱՊՀ երկրների մարզաձեւերի ֆեդերացիաների նախագահների խորհրդակցությանը, որտեղ քննարկվել է հանդբոլի միջազգային նոր լիգա հիմնելու հարցը: Այս մասին տեղեկացավ հանդբոլի Հայաստանի ֆեդերացիայի մամուլի ծառայությունից:

Ինչպես հայտնի է, գործում է տափօղակով հոկեյի միջազգային լիգա, որին մասնակցում են ԱՊՀ, Բալթյան եւ եվրոպական մի շարք երկրների թիմեր: Այդ ծրագիրն իրականացնողներն առաջարկել են նույնանման լիգա ստեղծել նաեւ հանդբոլում: Նախատեսվում է, որ այդ ծրագրին կմիանան նաեւ ԱՊՀ եւ Բալթյան երկրներին սահմանակից պետությունները՝ Իրանը, Ֆինլանդիան եւ այլն: Խորհրդակցության ժամանակ մասնակից բոլոր երկրների ներկայացուցիչներն էլ նախնական հավանության են արժանացրել միջազգային նոր լիգա հիմնելու գաղափարը:

Սարգիս Գրիգորյանի համոզմամբ, լիգայի հիմնումը մեծ խթան կլինի հատկապես այն երկրների համար, որոնցում մարզաձեւը նոր է սկսել առաջընթաց ապրել: Այդ երկրների շարքում է նաեւ Հայաստանը: Նոր լիգան հնարավորություն կընձեռի միջազգային հանդիպումներ անցկացնել բարձրակարգ թիմերի հետ, ինչը զգալի մրցակցային փորձ ձեռք բերելու հնարավորություն կընձեռի հանդբոլիստներին: Մարզասերներն էլ հնարավորություն կունենան հետեւելու գրավիչ մրցախաղերի:

Ճիշտ է, առայժմ պարզ չէ, թե լիգան ինչպիսի ձեւաչափ է ունենալու, այն գործելու է ակումբների՞, թե՞ հավաքականների մակարդակով: Խորհրդակցության ընթացքում ստեղծվել է աշխատանքային խումբ, որն էլ առաջիկա 3 ամիսներին զբաղվելու է լիգայի հիմնադրման նախապատրաստական աշխատանքներով: Հարկ է հաշվի առնել տարբեր երկրների ֆեդերացիաների առաջարկները, ստեղծել կանոնադրություն, մրցումների անցկացման կանոնակարգ, պատրաստել խորհրդանիշը, դրոշը, հիմնը եւ այլն:

Սպասվում է, որ հաջորդ խորհրդակցությունը կանցկացվի Հայաստանում: Բացառված չէ, որ հենց Երեւանում էլ համաձայնություն կայացվի եւ որոշում ընդունվի միջազգային նոր լիգա ստեղծելու մասին: Առաջնահերթ խնդիրներից մեկը ֆինանսական միջոցների հայթայթումն է: Դրա համար անհրաժեշտ է այս ծրագրում ընդգրկել հովանավորների: Ռուսաստանի ներկայացուցիչն այս հարցում անհանգստանալու առիթ չի տեսել, նշելով, որ մեծ թվով գործարարներ իրենց երկրում պատրաստ կլինեն հանուն գովազդի աջակցելու նոր ձեռնարկին: Հայաստանի հանդբոլի ֆեդերացիան պարտավորվել է մինչեւ աշնանային խորհրդակցությունը պատրաստել հանդբոլի նոր լիգայի տարբերանշանների եւ դրոշի նախագծերը:

Ընթերցողների մոտ բնական հարց կծագի. Հայաստանում կա՞ն հանդբոլի ուժեղ թիմեր, որոնք ընդունակ լինեն մրցել միջազգային լիգայում ընդգրկվելիք ակումբների հետ: Սարգիս Գրիգորյանը խորհրդակցությունում հարց է բարձրացրել, որպեսզի թիմերում խաղացողների ընդգրկման հարցում չլինեն սահմանափակումներ: Այդ դեպքում հայաստանյան թիմերը կարող են համալրել Ռուսաստանում, Ֆրանսիայում եւ այլ երկրներում բնակվող մեծ թվով բարձրակարգ հայ հանդբոլիստներ: Ճիշտ է, այդ սկզբունքին դեմ է արտահայտվել Բելառուսի հանդբոլի ֆեդերացիայի նախագահը, դժգոհելով, որ իրենց երկրի հանդբոլիստները օգտվելով երկքաղաքացիությունից, հանդես են գալիս ռուսական հարուստ ակումբներում: Ամեն դեպքում, միջազգային նոր լիգայի ստեղծումը կնպաստի մարզաձեւի զարգացմանը Հայաստանում:

«Դինամոն» մրցաշրջանը սկսեց Սուպերգավաթի նվաճմամբ

Ուկրաինայում ֆուտբոլային նոր մրցաշրջանը մեկնարկեց երկրի Սուպերգավաթի խաղարկությամբ: Պատվավոր մրցանակը վիճարկեցին երկրի չեմպիոն ու գավաթակիր Դոնեցկի «Շախտյորը» եւ առաջնության արծաթե մրցանակակիր Կիեւի «Դինամոն»:

Արդեն 5-րդ րոպեին դինամոյականները 11 մ հարվածի իրավունք ստացան եւ Գուսեւը բացեց հաշիվը: «Շախտյորին» ընդամենը 9 րոպե պահանջվեց հավասարակշռությունը վերականգնելու համար: Աչքի ընկավ Ֆեռնանդինյոն: Սակայն այդ հաշիվն էլ երկար չպահպանվեց: 32-րդ րոպեին Դիակատեն կրկին առաջ մղեց դինամոյականներին, իսկ խաղավարտից 7 րոպե առաջ Միլեւսկին վերջակետ դրեց Պոլտավայում կայացած մրցակցությանը: Հաղթելով 3-1 հաշվով, Կիեւի «Դինամոն» Յուրի Սյոմինի գլխավորությամբ նոր մրցաշրջանում իր առաջին տիտղոսը նվաճեց: «Շախտյորի» կազմում Հենրիխ Մխիթարյանը խաղադաշտում 64 րոպե անցկացրեց, որից հետո տեղը զիջեց Ալեքս Տեյշեյրային:

Ուկրաինայի առաջնությունը կմեկնարկի հուլիսի 8-ին: «Շախտյորը» սեփական հարկի տակ կմրցի «Օբոլոնի» հետ, որը նախորդ մրցաշրջանում 2 անգամ հաղթել էր միեւնույն 1-0 հաշվով:

Բումեյֆերներն էլ չեն հավատում հայկական ակումբների հաջողությանը

Այսօր կկայանան ֆուտբոլի Եվրոպայի լիգայի որակավորման առաջին փուլի պատասխան հանդիպումները: «Ուլիսը» «Հանրապետական» մարզադաշտում ժամը 19-ին կհյուրընկալի հունգարական «Ֆերենցվարոշին», որին մեկ շաբաթ առաջ հյուրընկալվելիս զիջել էր խոշոր՝ 0-3 հաշվով: Գործնականում հունգարացիները լուծել են հաջորդ փուլի ուղեգրի հարցը: Միայն հրաշք կարող է օգնել ուլիսցիներին շարունակելու պայքարը: Մնում է, որ գոնե սեփական հարկի տակ «Ուլիսը» կարողանա դրսեւորել իր ունակություններն ու արժանապատվորեն հրաժեշտ տա մրցաշարին: Բնականաբար, բումեյֆերներն էլ չեն հավատում ուլիսցիների հաջողությանը: Նույնիսկ երեւանյան խաղում նրանք նախապատվությունը տալիս են «Ֆերենցվարոշին», որի հաղթանակի գործակիցը 1,68 է: Իսկ «Ուլիսի» հաղթանակի գործակիցը 4,80 է: Ոչ-ոքին գնահատվում է 3,6 գործակցով:

Այսօր Ռուսթավիում «Մեսալուրգի» հետ պատասխան հանդիպումը կանցկացնի «Բանանցը», որը Երեւանում մրցակցին զիջել էր 0-1 հաշվով: Խաղը կսկսվի Երեւանի ժամանակով ժամը 18-ին: Իհարկե, «Ուլիսի» համեմատ «Բանանցը» հաջորդ փուլ մտնելու ավելի մեծ հնարավորություններ է պահպանում: Սակայն այս մրցախաղում էլ բումեյֆերները չեն հավատում «Բանանցի» հաջողությանը: Հայկական թիմի հաղթանակի համար խաղադրույքներ էին ընդունվում 6 գործակցով: Մինչդեռ «Մեսալուրգի» հաղթանակը գնահատվում է 1,54 գործակցով, իսկ ոչ-ոքին՝ 3,80: «Բանանցը» եվրոգավաթներում տնած 3 հաղթանակներն էլ տարել է մրցակիցների դաշտում: Կհաջողվի՞ արդյոք հյուրընկալվելիս 4-րդ հաղթանակը տոնել ու մտնել հաջորդ փուլ: Նշենք, որ պատասխան խաղին էլ «Բանանցի» կազմում չեն մասնակցի Վալտեր Պողոսյանն ու Յարեմա Կավագիվը:

ԲՈՆՑՔԱՄԱՐՏ

Դարչինյանի հաջորդ մենամարտը կկայանա Երեւանում

Բոնցքամարտի հայ երկրպագուներին հաճելի անակնկալ է սպասում: Նրանք վերջապես հնարավորություն կունենան Երեւանում ականատես դառնալու մեր անվանի պրոֆեսիոնալ բոնցքամարտիկ Վախթանգ Դարչինյանի մենամարտին, որը կայանալու է սեպտեմբերի 3-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում: Այս մասին տեղեկություն էր տարածել BoxRec-ը, իսկ Դարչինյանի մարզիչ Վազգեն Բադալյանն Armsport.am-ի հետ զրույցում հաստատել էր այդ լուրը:

Վախթանգ Դարչինյանի մրցակիցն է լինելու նամիբիացի Պաուլ Ամբուդան: Ըստ Բադալյանի, Վախթանգը հուլիսի 12-ին ժամանելու է Երեւան: Նախատեսված է ուսումնամարզական հավաք անցկացնել Ծաղկաձորում:

Էլինա Դանիելյանը կընկերակցի Լեւոն Արոնյանին

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, սեպտեմբերի սկզբին Մոսկվայում կանցկացվի շախմատի աշխարհի 6-րդ չեմպիոն Միխայիլ Բոտվիննիկի 100-ամյակին նվիրված շախմատային փառատոն: Արդեն վերջնականապես հայտնի է փառատոնի ծրագիրը ու մասնակիցների կազմը: Կանցկացվեն տղամարդկանց եւ կանանց մրցաշարեր արագ շախմատից: Հայաստանից Մոսկվայում հանդես կգան Լեւոն Արոնյանն ու Էլինա Դանիելյանը:

Մրցումների առաջին երկու օրերին կանցկացվեն արագ շախմատի 2 շրջանից բաղկացած մրցաշարեր, իսկ 3-րդ օրը շախմատիստները կխաղան զույգեր կազմած: Բնականաբար, Լեւոն Արոնյանին կընկերակցի Էլինա Դանիելյանը: Մյուս զույգերը կկազմեն ռուսաստանցիներ Վլադիմիր Կրամնիկն ու Տատյանա Կոսինցեւան, հնդիկ շախմատիստներ Վիշվանաթան Անանդն ու Համպի Կոներուն, նորվեգացի Մագնուս Կառլսենն ու լիտվացի Վիկտորիա Չմիլիտեն: Շախմատային փառատոնը կավարտվի 80 խաղատախտակների վրա անցկացվելիք միաժամանակյա խաղաշարով: 8 գրոսմայստերներից յուրաքանչյուրը կխաղա 10 խաղատախտակի վրա: Նրանց մրցակիցները կլինեն ռուսաստանցի առավել շնորհալի երեխաները:

Վառնայում Փամբուկչյանն առաջատարներից մեկն է

Բուլղարահայ շախմատիստ Վալենտին Փամբուկչյանն Ալբենայի մրցաշարից հետո ելույթներն է սկսել Վառնայում, որտեղ հանդես են գալիս 77 շախմատիստներ: 4 տուրից հետո Փամբուկչյանը 3,5 միավորով Վլադիմիր Գեորգիեւի, Բահրուզ Ռզաեւի, Բորիս Չաթալբաշեւի եւ Գրիգոր Գրիգորովի հետ գլխավորում է աղյուսակը:

Փամբուկչյանը մրցաշարը սկսեց 3 անընդմեջ հաղթանակով՝ պարտության մատնելով բուլղարացիներ Բորիս Խրիստովին, Պավել Յանեւին եւ Խրիստո Իվելինովին: 4-րդ տուրում նրա հաղթաշավը կանգնեցրեց ադրբեջանցի Բահրուզ Ռզաեւը՝ պարտիան ավարտելով ոչ-ոքի: 5-րդ տուրում հայ շախմատիստը սպիտակներով կխաղա Կիպրիան Բերբատովի հետ:

Հայ թենիսիստները կմրցեն ադրբեջանցիների հետ

Հուլիսի 15-ին Կազանում կմեկնարկի սեղանի թենիսի Եվրոպայի պատանեկան 54-րդ առաջնությունը տարիքային տարբեր խմբերի միջեւ: Կրտսեր տարիքային խմբում հանդես կգան 37 թիմեր, որոնք իրենց վարկանիշներին համապատասխան ընդգրկվել են A եւ B դիվիզիոնում: Հայաստանի բոլոր հավաքականներն էլ հանդես են գալու B դիվիզիոնում:

Կրտսեր տարիքի Հայաստանի պատանեկան հավաքականը վիճակահանությամբ ընդգրկվել է 1-ին խմբում, որտեղ մրցելու է Ադրբեջանի, Ուկրաինայի եւ Լյուքսեմբուրգի ընտրանիների հետ: Նույն տարիքային խմբի G ենթախմբում հանդես կգան հայ թենիսիստուհիները, որոնք մրցավեճի կբռնվեն Հոլանդիայի, Էստոնիայի, Բուլղարիայի եւ Լյուքսեմբուրգի հավաքականների հետ:

Ավագ տարիքի պատանիների մրցաշարի հաղթողի տիտղոսը կվիճարկեն 34 հավաքականներ: Հայ թենիսիստները պայքարի մեջ կմտնեն E խմբում ընդգրկված Ավստրիայի, Պորտուգալիայի եւ Սլովենիայի հավաքականների հետ: Իսկ աղջիկների մրցավեճում մեր հավաքականի մրցակիցները կլինեն E խմբում ընդգրկված Խորվաթիայի, Անգլիայի եւ Լիտվայի հավաքականները:

«Իմպուլսը» հրաժարվեց 3 լեգեոնականից

Դիլիջանի «Իմպուլսի» ղեկավարությունը Հայաստանի առաջնության 2-րդ շրջանի ավարտից հետո խզել է պայմանագրերը թիմում հանդես եկած 3 լեգեոնականների՝ Գագա Թբիլաշվիլու, Ռոման Հարկուշայի եւ Ալեքսանդր Մախիմովի հետ: Ընթացիկ առաջնությունում «Իմպուլսից» հեռացել էին նաեւ Հովհաննես Գոհարյանը, Ալբերտ Հովակիմյանը, Միխեիլ Սիմոնյանն ու Ավետիք Կիրակոսյանը:

Մոսկվան հայտ է ներկայացրել

Մոսկվան ՖԻՖԱ-ին պատշաճ հայտ է ներկայացրել շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսի Անանդ-Գելֆանդ մրցախաղը կազմակերպելու համար: Հայտերի ընդունման վերջնաժամկետը հուլիսի 31-ն է: Գործող կարգի համաձայն, մրցախաղի կազմակերպիչը պետք է նվազագույնը 1 մլն եվրո մրցանակային հիմնադրամ ապահովի, նաեւ այդ գումարի 20 տոկոսը փոխանցի ՖԻՖԱ-ին: Ընդ որում եզրափակիչ խաղի մասնակիցներն իրենց հասանելիք պարգեւավճարը ստանալու են առանց հարկման:

Առայժմ գաղտնի է պահվում, թե կոնկրետ ով է պատրաստ հովանավորել Մոսկվայում կազմակերպվելիք մրցախաղը: ՌԴ շախմատի ֆեդերացիայի վարչության նախագահ Իլյա Լեւիտովը հայտնել է, որ հովանավորը խոշոր գործարար է, շատ է սիրում շախմատը: Վերջինս խոստացել է 2 մլն եվրո մրցանակային հիմնադրամ, ինչպես նաեւ կազմակերպչական բոլոր ծախսերն իր վրա է վերցրել:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Գներ

Միխայիլ Բաղդասարով. Ցեմենտը գուցե էժանանա

«Արմավիա» ավիաընկերությունը սնանկության վտանգ չի զգում: Ընկերության սեփականատեր Միխայիլ Բաղդասարովը մտավախություն ունի ոչ թե սնանկության կառակցությամբ, այլ որ որոշ լրատվամիջոցներ ցանկանում են վարկաբեկել «Արմավիա»: Ներկայացնելով ավիաընկերության ընդհանուր վիճակը՝ Միխայիլ Բաղդասարովը նշում է, որ «Արմավիա» այսօր շաս ապառիկներ է վերցրել, բայց դրա փոխարեն պարտքեր չունի լիզինգային ընկերություններին:

Անդրադառնալով «Զվարթնոց» օդանավակայանի հետ ունեցած խնդիրներին ու պարտքերին՝ Բաղդասարովն ասաց, որ, օրինակ, ռուսական «Վնուկովո» եւ «Դոմոդեդովո» օդանավակայանները գները շաս են իջեցրել, «Զվարթնոցի» հետ կառված ոչ մի փոփոխություն չկա: «Վնուկովոն» եւ «Դոմոդեդովոն» ամբողջությամբ իջեցրել են գները, ինչը կառված է կերոսինի հետ, որը գնում ենք Գազպրոմից: Հաջորդ փուլը կլինի «Զվարթնոցը», որը թանկության առումով երրորդ տեղն է զբաղեցնում»:

«Ազգ»-ի հարցին, թե ինչո՞ւ է կտրուկ թանկացել Երեւան-Բեյրութ-Երեւան ավիատոմսը՝ 430 դոլարից դառնալով 660 դոլար, Բաղդասարովն ասաց, որ գները չեն բարձրանում, տոմսերն են փուլ առ փուլ վաճառվում:

«Սկզբում էժանները, հետո միջինները, իսկ հետո՝ ամենաթանկերը: Քանի որ ձմռանը փիչ տոմս են առնում, շուկայում էժան եւ միջին գների տոմսերն են վաճառվում, իսկ ամռանը վաճառվում են ամենաթանկ տոմսերը: Դրա համար էլ թվում է, թե գները բարձրացել են»:

«Ավիացիայում վերբեռնում է: Վարձակալված բոլոր ինքնաթիռները գնում ենք: Արդյունքում մեծանում է ապառիկի փաթեթը, բայց տնտեսությունը դրանից պետք է լավանա»: Բաղդասարովը նշում է, որ նախընտրելի է ապառիկ վճարել, բայց իմանալ, որ մի քանի տարի անց ինքնաթիռը քո սեփականությունը կլինի, քանի վարձ վճարել: Նրա մեկնաբանությամբ՝ համաչափային ճգնաժամի հետ կապված փոփոխություններ են տեղի ունեցել: «Լիզինգային ընկերությունները գրեթե սնանկության եզրին են: Ինքնաթիռների գներն իջել են, մինչդեռ վարձակալության գումարը մնացել է նույնը», ասում է Բաղդասարովը: Նա հավաստիացնում է, որ «Արմավիա» վարձակալության չի տվել, ուղղակի ընկերությունն ունի չվերթեր, որոնք իրականացնում են տուրիստական գործակալությունները. «Նրանք վերցնում են չվերթը, ընկերությանը վճարում են ինքնարժեքը գումարած համապատասխան փոքրիկ շահույթն ու իրենք էլ աշխատում այդ չվերթի հետ: Դա նորություն չէ, ուղղակի չարախոսելու նոր տեսակ է: Այս պարագայում «Արմավիան» մինուս չի ունենում, իսկ գործակալությունն էլ մեզնից շաս է շահագրգռված, որ չվերթը լցվի», ասում է Բաղդասարովը:

Իր բիզնեսը Վրաստան տեղափոխելու մտադրություն Բաղդասարովը չունի: «Իսկ ի՞նչը տեղափոխել: Ցեմենտի գործարա՞նը, թե՞ ավիաընկերությունը: Կապիտալն ուղղակի տեղափոխել այնտե՞ղ, ինչո՞ւ», հարցին հարցով պատասխանեց Բաղդասարովը՝ միաժամանակ հավելելով, որ ինքը առաջարկ է ստացել գնելու Վրաստանի ազգային փոխադրողը՝ «AIRZENA»-ն, սակայն վերջնական որոշում դեռեւս չի կայացրել:

«Ամռանը զեղչեր չեն լինում», ասում է Միխայիլ Բաղդասարովը՝ հավելելով, որ «Արմավիա» շուտով նոր չվերթեր կառաջարկի դեպի Մադրիդ, Լիոն եւ Բարսելոն:

ՀԱՄՍԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մամուլի հաղորդագրություն

Հրավիրում ենք Ձեզ մասնակցելու համաժողովի՝ «Դեմոկրատական սոցիալիզմի համակարգի հաստատման հեռանկարը Հայաստանում» օրակարգով:

Համաժողովը կկայանա ս.թ. հուլիսի 9-ին, ժամը 12:00-ին, ՀՀ կառավարության նիստերի դահլիճում:
Հասցեն՝ Երեւան, Մելիք Ադամյան 5

Հայաստանի Դեմոկրատական կուսակցություն

Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան Կուսակցություն

Խնդրում ենք Ձեր մասնակցության մասին տեղեկացնել 51-04-49, 56-22-33 հեռախոսահամարներով կամ arm_democracy@yahoo.com էլ. փոստի հասցեով

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 23 թիվ 1 որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ՄՆ-ԱՊՁԲ-51

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, որը գտնվում է ք. Երեւան, Կառավարական տուն 3 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգով գնում:

Պարզեցված ընթացակարգի գնման հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել Հակահրդեհային անվտանգության սարքավորումներին ձեռքբերման գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար Հակահրդեհային անվտանգության սարքավորումներին ձեռքբերումը:

Գնումները ֆինանսավորվելու են 2011 թ. պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին եւ գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը :

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետն է՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի պայմանների համաձայն, գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք, կարող են մասնակցել մրցույթին անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Պարզեցված ընթացակարգի հայտարարության հիման վրա Պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվա ընթացքում թղթային ձեւով ստանալ անվճար հրավեր:

Պարզեցված ընթացակարգի հրավերը թղթային ձեւով տրամադրվելու է անվճար: Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ մշակույթի նախարարություն ք. Երեւան, Կառավարական տուն 3 հասցեով, 7-րդ հարկ, Գործերի կառավարման վարչություն, մինչեւ սույն հայտարարությունը հրապարակվելու պահից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 15:00-ն, դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Պարզեցված ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետում՝ 5 օրացուցային օրվա ընթացքում:

Պարզեցված ընթացակարգի հաղթող կճանաչվի Մասնակիցների բավարար գնահատված հայտերով՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակիցը:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին, համապատասխանությունը գնահատելու համար Մասնակիցները պետք է Պատվիրատուին ներկայացնեն պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

ՀՀ մշակույթի նախարարություն
Հեռ. 568409

«Լեգալ-աուդիտ» ՍՊԸ
տնօրեն եւ աուդիտոր՝ Ս. Եղիազարյան

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

Ձեւ N 1

առ 01/01/11

Կազմակերպության անվանումը	«Իդրամ» ՍՊԸ	ծածկագիր 39273429
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները	դրամական փոխանցումներ	
Պետական ռեգիստրում գրանցման համարը		28611006775
Հարկ վճարողի հաշվառման համարը		02588245
Չափի միավորը		Մեկ հազար ՀՀ դրամ
Գտնվելու վայրը 56-97-07	ք. Երեւան, Սայաթ-Նովա 38 շ., բն. 27	հեռախոսը
Փաստացի գործունեության իրականացման վայրը	ք. Երեւան, Հանրապետության 49. 7/1	

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010	2796.0	2705.0
Ոչ նյութական ակտիվներ	030	185459.0	185459.0
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	070		114.0
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	188255	188278
II. Ընթացիկ ակտիվներ			
Տրված ընթացիկ կանխավճարներ	150	64.0	33.0
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	160	121.0	499.0
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170		54.0
Այլ դեբիտորական պարտքեր	180	5.0	3.0
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	1757.0	9280.0
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	210	28.0	
դրամական միջոցներ ճանապարհին	211		2006
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	1975.0	11875.0
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	190230	200153

ՊԱՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240	185496.0	185496.0
Կուտակված շահույթ	270	(11690.0)	(24,611.0)
Ընդամենը սեփական կապիտալ	300	173806.0	160885.0
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ փոխառություններ	380	14037.0	20977.0
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390	177.0	100.0
Ստացված ընթացիկ կանխավճարներ	400	2016.0	8365.0
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410		136.0
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական	420		163.0
Այլ կրեդիտորական պարտքեր	450	194.0	9527.0
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	16424.0	39268.0
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	190230.0	200153.0

Ղեկավար
Գլխավոր հաշվապահ

Գ. Ստեփանյան
Ա. Հովնանյան

«Լեգալ-աուդիտ» ՍՊԸ
տնօրեն եւ աուդիտոր՝ Ս. Եղիազարյան

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձեւ N 2

01/01/10-31/12/10

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	661	4,894
Համախառն շահույթ (վնաս)	030	661	4,894
Իրացման ծախսեր	040	(477)	(2,917)
Վարչական ծախսեր	050	(8,463)	(14,880)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	(8,279)	(12,903)
Գործառնական շահույթ (վնաս)	090	(8,279)	(12,903)
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	130	(10)	(18)
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	(8,288)	(12,921)
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	(8,288)	(12,921)
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	(8,288)	(12,921)

Ղեկավար
Գլխավոր հաշվապահ

Գ. Ստեփանյան
Ա. Հովնանյան

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Իդրամ» ՍՊԸ մասնակիցներին

Մեր կողմից աուդիտի է ենթարկվել «Իդրամ» ՍՊ ընկերության կից ներկայացված 2010թ տարեկան ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2010թ դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրենության պատասխանատվությունը

Նշված ֆինանսական հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան կազմելու և արժանահավաստ ներկայացնելու համար պատասխանատվություն է կրում ընկերության տնօրենությունը: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան հաղորդակցության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

Աուդիտորի պատասխանատվությունը և աշխատանքների բնույթի նկարագիրը

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Հայաստանի Հանրապետության աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոններ, աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են աուդիտորի դատողության վրա հիմնված ընթացակարգերի իրականացում, որոնք ուղղված են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկությունների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռքբերմանը: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հեռազոտումը և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը:

Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով «Իդրամ» ՍՊ ընկերության կողմից կազմված տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ եւ իրական պատկեր և կազմված են ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համահունչ:

«Լեգալ-Աուդիտ» ՍՊԸ տնօրեն և աուդիտոր
Ս.Եղիազարյան

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 6.7.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Խոյեան Տպագրական» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: